Azg
armenian daily
18 ՍԵՊՏԵՄԲԵՐ 1998 ՈՒՐԲԱԹ # 174 (1677)

«Ռուսական թոքախտի» դեմ դեղորայքն անզոր է

ՓԱՐԻԶ, 17 ՍԵՊՏԵՄԲԵՐ, ՍՆԱՐՔ: Ռուսաստանում առաջացած թոքախտի նոր ձեւի համաճախարհային համաճարակի վերածվելու վտանգի մասին են հայտարարել մի խումբ ամերիկացի, ֆրանսիացի, բրիտանացի բժիշկներ: Այդ ձեւի հիմնական տարբերակիչ առանձնահատկությունը ամբողջական դիմադրողականությունն է դեղորայքին:

Հայտարարության մեջ նշվում է, որ այլ երկրներում ռուսական ծագմամբ թոքախտի տարածումը «միայն ժամանակի հարց է»: Սակայն արդեն այսօր փորձարկումներ են կատարվում դրա բուժման նպատակով: Բժիշկների գնահատմամբ, «ՌԴ-ում թոքախտի նոր ձեւի ներկայիս մակարդակը մեծ անհանգստություն է հարուցում, իսկ տնտեսական ճգնաժամը կարող է խորացնել այն»:

Բժիշկները միջազգային հանրությանը կոչ են անում անմիջապես միջոցներ ձեռնարկել այդ հիվանդության կանխարգելման նպատակով, իսկ դրա համար, բժիշկների հաշվարկումներով, անհրաժեշտ է 100 մլն դոլարից ոչ պակաս գումար:

ԵՐԵՎԱՆ

Նիկոլայ Բորդյուժա. «Մենք համատեղ ենք պատմում սահմանը եւ համատեղ էլ պետք է պատմենք»

ՌԱՖԻԿ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Սեպտեմբերի 17-ին ՀՀ կառավարության ընդունելությունների տանը տեղի ունեցավ ԱՊՀ երկրների սահմանապահ զորքերի հրամանատարների խորհրդի հերթական, 31-րդ նիստը, որից առաջ մասնակիցներին ընդունել էր ՀՀ նախագահ Ռոբերտ Քոչարյանը: Բացի Սոլդովայից, նիստին ներկա էին ԱՊՀ մյուս բոլոր երկրների սահմանապահ զորքերի հրամանատարները (Ադրբեջանը ներկայացնում էր այդ զորքերի շտաբի պետը): Նիստից անմիջապես հետո հրավիրված մամուլի ասուլիսը բացեց մինչեւ երեկ ՌԴ սահմանապահ ծառայության տնօրեն Նիկոլայ Բորդյուժան, որն արդեն նշանակվել է Ռուսաստանի Անվտանգության խորհրդի քարտուղարի պաշտոնում: Կարեւորելով, որ իրենց նիստը տեղի է ունենում Երեւանում՝ Հայաստանի անկախության տոնի նախօրեին, որն Բորդյուժան ընդգծեց, որ այդ առթիվ իրենք արդեն նախապես շնորհավորել են հայ գործընկերներին: Ինչ վերաբերում է անմիջականորեն նիստին, ապա, ըստ Բորդյուժայի, «ննջարկվել են մեր փոխհարաբերությունների զուտ պրակտիկ հարցերը ուղղված սահմանապահային քաղաքականության իրականացմանն ու ապահովմանը»: Կոնկրետ՝ «նիստում ննջարկվեցին ԱՊՀ-ն, նրա մարմինները բարեփոխելու հարցերը, մշակվեցին մոտեցումներ, դրանց լուրջ ուշադրություն դարձվեց: Սկզբունքորեն մենք գտանք այն հիմնական ուղղությունները, որոնցով պետք է առաջ ընթանանք... Մենք ննջարկեցինք սահմանապահ զորքերի միջպետական համագործակցության կոնցեպցիան՝ տեղեկատվության փոխանակման շրջանակներում եւ մի շարք այլ հարցեր, կապված գիտամեթոդական եւ ուսումնատեղեկատվական ձեռնարկների փոխանակման հետ, որոնք անհրաժեշտ են սահմանապահ համագործակցության կառավարման կառույցների գործունեության համար»:

ԱՐՄԵՆՊՐԵՍ

Տես էջ 2

ՀԱՄԱՆԱԽԱԳԱՀՆԵՐԻ ԱՅՑ

Անկեղծ զրույց Ստեփանակերտում

ԵՐԵՎԱՆ, 17 ՍԵՊՏԵՄԲԵՐ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: Սեպտեմբերի 17-ին Ստեփանակերտ է ժամանել ԵԱՀԿ-ի պատվիրակությունը, որի կազմում են Լեռնային Ղարաբաղի գծով Մինսկի խմբի համանախագահներ Ժորժ Վոժիեն (Ֆրանսիա), Դոնալդ Կայզերը (ԱՄՆ) եւ ռուսական մասի համանախագահության անդամ, դեսպան Իգոր Ստուդենիկովը: Առողջական վիճակի պատճառով Մինսկի խմբի ռուսաստանցի համանախագահ Յուրի Յուկալովը երեւանից չի կարողացել մեկնել Ստեփանակերտ:

Ինչպես հայտնեցին ԼՂՀ արտգործնախարարության մամլո ծառայությունից, օրվա առաջին կեսին տեղի է ունեցել պատվիրակության հանդիպումը ԼՂՀ արտգործնախարար Նաիրա Մելքումյանի հետ: Արձանագրելով, որ մի շարք հանգամանքների պատճառով բանակցային գործընթացը փաստորեն ընդհատվել է, զրույցի մասնակիցները կարծիքներ են փոխանակել Ղարաբաղի հիմնախնդրի փոխադարձ ընդունելի լուծմանը միտված ճանապարհին հետագա քայլերի վերաբերյալ: Քանի որ ԼՂՀ նախագահ Արկադի Ղուկասյանը գտնվում է հանրապետության սահմաններից դուրս, միջազգային միջնորդներն այնուհետեւ հանդիպել են ԼՂՀ Ազգային ժողովի նախագահ Օլեգ Եսայանի, վարչապետ Ժիրայր Պողոսյանի եւ պաշտպանության նախարար Սամվել Բաբայանի հետ:

Կառուցողական երկխոսություն է կայացել Ղարաբաղի խնդրի կարգավորման հարցի շուրջ:

Հյուրերը ղարաբաղյան կողմին երախտագիտություն են հայտնել անկեղծ զրույցի, դիրքորոշման պարզ եւ հստակ շարադրման համար, ինչը, նրանց կարծիքով, ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահությանը հնարավորություն կտա ավելի արդյունավետ շարունակել աշխատանքը փոխզիջողական լուծում գտնելու համար:

Գլխավոր դատախազին «ներկայացնելու կարիք չկա»

ԵՐԵՎԱՆ, 17 ՍԵՊՏԵՄԲԵՐ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: Նախագահ Ռոբերտ Քոչարյանը սեպտեմբերի 17-ի առավոտյան ՀՀ դատախազության աշխատակիցներին ներկայացրեց նոր նշանակված գլխավոր դատախազ Աղվան Հովսեփյանին: Իրականում, ինչպես նշեց նախագահը, ներկայացնելու առանձնակի կարիք էլ չկար, քանի որ պրն Հովսեփյանը արդեն 25 տարի աշխատում է դատախազության համակարգում, որից վերջին 10-ը՝ ՀՀ դատախազությունում:

Դատախազությունը լուրջ անելիքներ ունի հանրապետությունում օրինականության ապահովման եւ ամրապնդման, ընդհանրապես իրավապահ մարմինների ու կառույցների գործունեության արդյունավետության բարձրացման ուղղությամբ, ասաց նախագահը, ավելացնելով, որ «Դատախազության մասին» օրենքը, հատկապես կառուցվածքային փոփոխությունների առումով, խնդիրների առջեւ է կանգնեցնելու, բայց դրանք կլուծվեն: «Այս պտորտում անելիքներ շատ կան, համառ ու ամենօրյա աշխատանք է պետք», ասաց նախագահը:

Որքանով որ Արմենպրեսի թղթակցին հաջողվեց իմանալ դատախազության աշխատակիցների կարծիքները նշանակման վերաբերյալ, դրանք դրական են. Աղվան Հովսեփյանը պրոֆեսիոնալ է, աշխատել է դատախազական բոլոր օղակներում, ունի հառորդարյա աշխատանքային փորձ:

ԱՐՄԵՆՊՐԵՍ

ՎԱՇՐԱԳՏՈՒ

907 հոդվածի ճակատագիրը որոշվելու է հաջորդ շաբաթ

ԲԱՔՈՒ, 17 ՍԵՊՏԵՄԲԵՐ, ՆՈՅՅԱՆ ՏՊՊՆ: ԱՄՆ Ներկայացուցիչների պալատի ֆինանսական հատկացումների հանձնախմբի կողմից սեպտեմբերի 10-ին 907 հոդվածը վերացնելու մասին հավելումը հաստատվելուց հետո 907-ի վերացմանը կողմ քվեարկած հանձնախմբի մի քանի անդամներ խուսափել են հարցազրույց տալ «Ամերիկայի ձայն» ռադիոկայանի հայկական բաժնին: Իսկ օրենսդրական հարցերով ԱՄՆ կոնգրեսական Բրեդ Շերմանի ավագ օգնական Դեմետրա Պաղասը ռադիոկայանին տված իր հարցազրույցում նշել է, թե 907 հոդվածը վերացնելու դեմ առկա են 2 փաստարկներ.

- Ադրբեջանը շարունակում է Հայաստանի շրջափակումը,
- Ֆինանսական հատկացումների հանձնախմբի իրավական լիազորությունից ամբողջովին դուրս է 907-ի չեղյալ հայտարարումը:

Նա տեղեկացրել է, որ Շերմանը այդ խնդրի գործընթացային հարցն արդեն պատրաստել է Ներկայացուցիչների պալատի գործունեության կանոնների հարցերով զբաղվող հանձնախմբում: Իսկ Ներկայացուցիչների պալատը հաջորդ շաբաթ ննջարկելու է արտասահմանյան երկրներին օգնություն հատկացնելու օրինագիծը եւ 907-ի խնդիրը, եւ «Հայաստանի հարցերով կոնգրեսականների խումբը առաջարկելու է վերականգնել 907-ը եւ միաժամանակ խարոշություն է կազմակերպվելու 907-ի հավելումը չեղյալ հայտարարելու համար»:

Կոնգրեսի արտաքին հարաբերությունների հանձնախմբի եւ Կոնգրեսում հայկական հարցերով խմբի անդամ կոնգրեսական Ֆրեդ Շերմանը ռադիոկայանի հայկական բաժնին ասել է. «ես չեմ կարծում, որ 907-ը չեղյալ է հայտարարվելու: Մենք դրա համար պատրաստվում ենք պայքարելու Ներկայացուցիչների պալատում: Մենք դրա համար պայքարելու ենք սենատորներից ու կոնգրեսականներից բաղկացած խորհրդակցական հանձնախմբում եւ ես կարծում եմ, որ ամերիկյան արժեքները վերջ ի վերջո կպահպանվեն ու մենք կշարունակենք ունենալ դրանք արտացոլող արտաքին քաղաքականություն: Չեմ կարծում, թե եկամտահարկ վճարող ամերիկացիների համար իմաստ ունի ֆինանսավորել Բաքու-Ջեյհան խողովակաշարի կառուցումը, քանի դեռ չի հաստատվել խաղաղություն Հայաստանի, ԼՂՀ ու Ադրբեջանի միջեւ»:

Արյունալի միջադեպ Ռամալլահի արվարձանում

ՅԵՐՈՒՍԱԼԵՄ, 17 ՍԵՊՏԵՄԲԵՐ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: Նոր արյունալի միջադեպ է տեղի ունեցել այսօր Հորդանան գետի արեւմտյան ափի Ռամալլահի արվարձանում, որը կարող է կտրուկ սրել իրադրությունը տարածաշրջանում: Իսրայելացի բնակչի կողմից հրազենի գործադրման արդյունքում պաղեստինցի մի պատանի զոհվել, մյուսը ծանր վերքեր է ստացել: Կրակ է բացվել անցնող ավտոմեքենայից, որը պաղեստինցիները փորձում էին խլել: Իսրայելական ոստիկանության ներկայացուցչի հայտարարության համաձայն, ներկայումս անվտանգության ծառայությունները միջադեպի հետաքննություն են կատարում: Տեղական քաղաքական մեկնաբանները երկյուղ են հայտնում, որ պաղեստինցու մահը կարող է արաբների բողոքի զանգվածային ելույթների ալիք հարուցել Արեւմտյան ափին իսրայելական զորքերի ներկայության դեմ: Լարվածության սաստկացումը եւ հնարավոր ահաբեկչական գործողությունները կանխելու համար Իսրայելի անվտանգության ուժերը բերվել են բարձր պատրաստության վիճակի:

Իրանը սպառնացել է «լրացուցիչ միջոցներ» ձեռնարկել

ԿԱՅՐԵ, 17 ՍԵՊՏԵՄԲԵՐ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: Իրանի ղեկավարությունը հաստատել է Ազգային խորհրդի (խորհրդարան) հանձնաժողովները երկրում ՄԱԿ-ի տեսչական բոլոր ստուգումները դադարեցնելու մասին: Ըստ ԻՏԱՌ-ՏԱՍՍ-ի հաղորդման, Սադդամ Հուսեյնի նախագահությամբ Իրանի ղեկավարության այսօր գիտեցրը կայացած նիստում ընդունվել է նաեւ ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդին ուղղված դիմում: Այն բովանդակում է Բաղդադի նկատմամբ պատժամիջոցների հարցի կանոնավոր ննջարկումները դադարեցնելու որոշումը չեղյալ հայտարարելու կոչ: Եթե դա չարվի, ապա Իրանը սպառնացել է «լրացուցիչ միջոցներ» ձեռնարկել:

ԱՇԳԱՅԻՆ ԺՈՂՈՎ

«Կարեւորը կոտրվող աթոռից չընկնելն է»

ԱԺ-ում շեւավորվում է միացյալ ճակատ «Երկրապահին»

ՆԱՐԻՆԵ ԴԻԼԱՔԱՐՅԱՆ

Աթոռն իշխանության խորհրդանիշն է, ուստի Պարույր Հայրիկյանը կոտրվող աթոռի հետ գորգին սայթաքելով, արձանագրեց, որ կարեւորը կոտրվող աթոռի վրա հավասարակշռություն պահպանելն է, այսինքն՝ փորձել սեփական նվազող ուժերը միավորել այլոց հետ՝ ընդդեմ արդեն ձեւավորված մեծամասնության: ԱԺ-ում փորձության քարը ընտրական օրենսգիրքն է, եւ առաջին իսկ աշխատանքային օրը հայտնի դարձավ, որ ընտրական օրենսգրքի երեք տարբերակների հեղինակները՝ էդ. Եգորյանը, Կոմկուսը եւ Վիգեն Խաչատրյանը, միավորել են իրենց նախագծերը: Ստեղծված է ընտրական օրենսգրքի միավորյալ նախագիծը, որին կողմ են ոչ միայն խորհրդարանական այս ուժերը, այլեւս «Հանրապետություն» խմբակցությունն՝ իր կազմի մեջ մտնող կուսակցություններով, ԻՄ-ը, ԱԺՄ-ն, Հայաստանի ժողովրդական կուսակցությունը: ՀՅԴ պատգամավոր Ռուբեն Հակոբյանը մասնակցել է միացյալ տարբերակի ննջարկումներին, սակայն չի ստորագրել՝ ընտրական հանձնաժողովների կազմության սկզբունքից դժգոհ:

Մանրամասնենք՝ ընտրական օրենսգրքի միացյալ տարբերակում գտնված է առաջին փոխզիջումը: Ընտրական բոլոր մակարդակի հանձնաժողովներում ԱԺ խմբակցություն ունեցող կուսակցությունները կունենան 2-ական անդամ, իսկ այն կուսակցությունները, որոնք թեկուզ մեկ կուսակցական ունեն խորհրդարանում, ինչպես նաեւ նախագահական ընտրություններում 5 տոկոսից ավելի հավաքած թեկնածուի կուսակցությունները՝ 1-ական: Այսպիսով լուծվում է ՀՅԴ-ին, ՀԺԿ-ին (Կարեն Դեմիրճյանի կուսակցության) եւ «Հանրապետություն» խմբակցության կազմի մեջ մտնող կուսակցությունների՝ ՌԱ(լդ)Կ, ՔՊՄ, ՍԴՀԿ եւ մնացյալ կառույցների՝ «Ժողովրդավարական հայրենիք», «Մտավորական Հայաստան», «Օրինաց երկիր»... խնդիրը: Զուգահեռաբար մեկական անդամ կունենան հասարակական-քաղաքական կյանքում կշիռ ունեցող այն կուսակցությունները, որոնք կկարողանան առայժմ անկախ պատգամավորներից ընտրել իրենց թեկնածուին՝ իբրեւ կուսակցականի:

Տես էջ 3

digitised by A.R.A.R.@

ԱԶԳ

ՈՒՇԱԳԻՐ

Սեպտեմբերի 4-ի «Կանալ-6» հեռուստատեսային կայանի «Ջեւիզ կաբուղու» ծրագիրն ամբողջությամբ հատկացված է եղել պատրիարքական ընտրության կնճռոտ հարցին: Ծրագիրը տեւել է մոտ չորս ժամ: Հանդիսավարը Հուլի Ջեւիզօղլուն նախօրոք հրավիրել է Շահան եւ Մեսրոպ արքեպիսկոպոսներին, բայց նրանք մերժել են մասնակցել այդ ծրագրին՝ հայտնելով միաժամանակ, որ կողմնակից չէին համայնքային այդ հարցի հրապարակային քննարկմանը հեռուստատեսությամբ: Սակայն, ինչպես երեւում է, Ջեւիզօղլուին հաջողվում է գտնել մեկին: Դա Կանդիլլիի եկեղեցու քաղային խորհրդի ատենապետ Տիգրան Գեւորգյանն է լինում, որին էլ շնորհակալություն է հայտնում հանդիսավարը «քաղաքացիական արիության համար»: Հաղորդումն անցել է «էլեկտրականացած մթնոլորտի մեջ», մանավանդ երբ հեռախոսային զանգերով կարծիքներ են հնչել եթերում: Հաղորդավարի կողմնակալությունը (Շահան արքեպիսկոպոսի հանդեպ) ակներեւ է եղել, բայց ընդհանուր առմամբ փորձել է լսել իր խոսակիցների ասածները:

Տիգրան Գեւորգյանը կարողացել է պահել իր խոսքերի հակակշիռը: Նա հիմնովին սխալ է համարել պատրիարքական ընտրությունը որպես «եկամուտների կամ ռենտային կռիվ» ներկայացնելու փորձերը՝ նշելով, որ «պետական հակակշիռ կա հաշիվներու վրա», եւ նման կռիվներն ուղղակի բացառվում են, «աթոռի կիրք կա, բան մը որ չէ պատահած նախկին ընտրություններու ընթացքին»:

Հեռաձայնով հաղորդմանը մասնակցած անձերից Կազի համալսարանի պրոֆ. Մեհմեդ-Ալի Կըլըչբայը պատշաճանել է այն տեսակետը, թե պետությունը չպետք է խառնվի այս խնդրին, որը պետք է լուծվի բացառապես համայնքի կողմից: Հյուսեյին Հաթեմին հայտնել է, թե հանգուցյալ պատրիարքի փոխանորդագիրն ի զորու պետք է համարվի նաեւ նրա մահից հետո: Նա իր համակրանքն է արտահայտել Մեսրոպ արքեպիսկոպոսի նկատմամբ:

Երրորդ զանգողը Սամբուլի համալսարանի պրոֆ. Նիյազի Յոկտեմն է եղել, որը նույնպես իր համակրանքն է արտահայտել Մեսրոպ արքեպիսկոպոսի նկատմամբ: Լինելով միջկրոնական երկխոսության միջազգային մի խմբակի անդամ, նա ցավ է հայտնել, որ պարբերաբար անհրավություններ են կատարվում հայերի հանդեպ, որոնք պարտաճանաչ հայրենակիցներ են: Մեսրոպ արքեպիսկոպոսի մասին իր դրական կարծիքն արտահայտելուց հետո, նա, այնուամենայնիվ, ասել է, թե պետական միջամտությունն ինքն պարտադիր չի գտնում: «Ամենամտահոգիչ» մասը «Աբամ» թերթի թղթակից Գյուլեր Քյոմուրջու մասնակցությունն է եղել: Այս խնդրի շուրջ երկու հոդվածների հեղինակը պնդել է, որ «լրատվությունների առկայության դեպքում» պետությանը այլ բան չէր մնում անել, քան միջամտելը: Լուրեր են պտտվում, պնդել է նա, որ Կանդիլլիի եւ Բոյաջըգյուղի շրջանում գեղծումներ են կատարվել, որին հաղորդավարն անմիջապես անդրադարձել է հարցնելով, թե ինչո՞ւ ժամանակին դիմումները չեն կատարվել այդ գեղծումները ճնշելու համար»: Քյոմուրջինն պատասխանել է, որ պատրիարքի ընտրությունն առիթ է պտտված լուրերի վերաբերյալ հետաքննություններ կատարելու: Նա միաժամանակ նշել է, որ «պետք է նախընտրենք ոչ թե նրան, որ ավելի շատ գիտի, այլ նրան, որ մեզնից է», ակնարկելով, որ Մեսրոպ արքեպիսկոպոսը ընտրության դեպքում «անգույն ու անձայն» մի անձնավորություն չի լինելու, մինչդեռ Շահան արքեպիսկոպոսի դեպքում հարցեր չեն լինի: Հեռախոսազանգերով մասնակցել են նաեւ «Ակօս» թերթի թղթակից Սեւան Աթաօղլուն եւ պատրիարքարանի դիվանապետ Գրիգոր քահանա Տամատյանը: Առաջինը մի շարք բառերի վերաբերյալ ճշտումներ կատարելուց հետո կարծիք է հայտնել, թե պետք է ավելի նուրբ լեզու գործածել քաղաքական հարցերի շուրջ խոսելիս: Պատասխանելով հաղորդավարի այն հարցին, թե ինչ վերաբերմունք ունի կուսակցության որոշումի հանդեպ եւ ում է ճանաչում որպես տեղապահի, հայ քահանան նշել է, որ հարգելով հանդեպ երկրի օրենքները, ինքը հավատարիմ է մնում եկեղեցական կանոններին եւ ճանաչում է Մեսրոպ արքեպիսկոպոսի տեղապահությունը: Հաղորդման ընթացքում ստացվել են նաեւ ֆաքսեր, տարբեր նախարարների կողմից Մեսրոպ արքեպիսկոպոսին ուղղված նամակների պատճեններ, որոնցում օգտագործված են եղել «առաջնորդական փոխանորդ» կամ «տեղապահ» տիտղոսները: Վերջում հաղորդավարը հայտնել է, թե հարկ լինելու դեպքում մեկ ուրիշ հաղորդում էլ կտրամադրվի նույն թեմային:

Կ. ՊՈԼԻՍ

Պատրիարքական ընտրության հարցը թուրքական հեռուստատեսությամբ

Հայտնի է, որ թուրքերը վերջին շրջանում չափից ավելի շատ զբաղվեցին եւ այժմ էլ զբաղվում են Թուրքիայի հայոց պատրիարքական ընտրության հարցով՝ հրահրելով կրքերն իրենց ավելի քան անտեղի միջամտություններով: Այս անգամ հեռուստատեսային մի ծրագիր է, որ նվիրված է հարցին: Տեղեկությունները քաղում ենք «Յառաջի» սեպտեմբերի 8-ի համարից:

պարակային քննարկմանը հեռուստատեսությամբ: Սակայն, ինչպես երեւում է, Ջեւիզօղլուին հաջողվում է գտնել մեկին: Դա Կանդիլլիի եկեղեցու քաղային խորհրդի ատենապետ Տիգրան Գեւորգյանն է լինում, որին էլ շնորհակալություն է հայտնում հանդիսավարը «քաղաքացիական արիության համար»: Հաղորդումն անցել է «էլեկտրականացած մթնոլորտի մեջ», մանավանդ երբ հեռախոսային զանգերով կարծիքներ են հնչել եթերում: Հաղորդավարի կողմնակալությունը (Շահան արքեպիսկոպոսի հանդեպ) ակներեւ է եղել, բայց ընդհանուր առմամբ փորձել է լսել իր խոսակիցների ասածները:

Տիգրան Գեւորգյանը կարողացել է պահել իր խոսքերի հակակշիռը: Նա հիմնովին սխալ է համարել պատրիարքական ընտրությունը որպես «եկամուտների կամ ռենտային կռիվ» ներկայացնելու փորձերը՝ նշելով, որ «պետական հակակշիռ կա հաշիվներու վրա», եւ նման կռիվներն ուղղակի բացառվում են, «աթոռի կիրք կա, բան մը որ չէ պատահած նախկին ընտրություններու ընթացքին»:

Երրորդ զանգողը Սամբուլի համալսարանի պրոֆ. Նիյազի Յոկտեմն է եղել, որը նույնպես իր համակրանքն է արտահայտել Մեսրոպ արքեպիսկոպոսի նկատմամբ: Լինելով միջկրոնական երկխոսության միջազգային մի խմբակի անդամ, նա ցավ է հայտնել, որ պարբերաբար անհրավություններ են կատարվում հայերի հանդեպ, որոնք պարտաճանաչ հայրենակիցներ են: Մեսրոպ արքեպիսկոպոսի մասին իր դրական կարծիքն արտահայտելուց հետո, նա, այնուամենայնիվ, ասել է, թե պետական միջամտությունն ինքն պարտադիր չի գտնում: «Ամենամտահոգիչ» մասը «Աբամ» թերթի թղթակից Գյուլեր Քյոմուրջու մասնակցությունն է եղել: Այս խնդրի շուրջ երկու հոդվածների հեղինակը պնդել է, որ «լրատվությունների առկայության դեպքում» պետությանը այլ բան չէր մնում անել, քան միջամտելը: Լուրեր են պտտվում, պնդել է նա, որ Կանդիլլիի եւ Բոյաջըգյուղի շրջանում գեղծումներ են կատարվել, որին հաղորդավարն անմիջապես անդրադարձել է հարցնելով, թե ինչո՞ւ ժամանակին դիմումները չեն կատարվել այդ գեղծումները ճնշելու համար»: Քյոմուրջինն պատասխանել է, որ պատրիարքի ընտրությունն առիթ է պտտված լուրերի վերաբերյալ հետաքննություններ կատարելու: Նա միաժամանակ նշել է, որ «պետք է նախընտրենք ոչ թե նրան, որ ավելի շատ գիտի, այլ նրան, որ մեզնից է», ակնարկելով, որ Մեսրոպ արքեպիսկոպոսը ընտրության դեպքում «անգույն ու անձայն» մի անձնավորություն չի լինելու, մինչդեռ Շահան արքեպիսկոպոսի դեպքում հարցեր չեն լինի: Հեռախոսազանգերով մասնակցել են նաեւ «Ակօս» թերթի թղթակից Սեւան Աթաօղլուն եւ պատրիարքարանի դիվանապետ Գրիգոր քահանա Տամատյանը: Առաջինը մի շարք բառերի վերաբերյալ ճշտումներ կատարելուց հետո կարծիք է հայտնել, թե պետք է ավելի նուրբ լեզու գործածել քաղաքական հարցերի շուրջ խոսելիս: Պատասխանելով հաղորդավարի այն հարցին, թե ինչ վերաբերմունք ունի կուսակցության որոշումի հանդեպ եւ ում է ճանաչում որպես տեղապահի, հայ քահանան նշել է, որ հարգելով հանդեպ երկրի օրենքները, ինքը հավատարիմ է մնում եկեղեցական կանոններին եւ ճանաչում է Մեսրոպ արքեպիսկոպոսի տեղապահությունը: Հաղորդման ընթացքում ստացվել են նաեւ ֆաքսեր, տարբեր նախարարների կողմից Մեսրոպ արքեպիսկոպոսին ուղղված նամակների պատճեններ, որոնցում օգտագործված են եղել «առաջնորդական փոխանորդ» կամ «տեղապահ» տիտղոսները: Վերջում հաղորդավարը հայտնել է, թե հարկ լինելու դեպքում մեկ ուրիշ հաղորդում էլ կտրամադրվի նույն թեմային:

ԵՐԵՎԱՆ

Արեւածաղկի սերմ վաճառողներն ու շրթողները

Երբեւէ չեմ հարցրել ու չգիտեմ, թե որքան է կազմում արեւածաղկի սերմ վաճառողի օրվա եկամուտը, նկատի ունենալով, որ մեր երկրում սոցիալական ոլորտը տնօրինող պաշտոնյաները սիրում են շեշտել՝ գոյություն չունի եկամուտների հայտարարագրված համակարգ, եւ մեր բնակչությունն էլ (ներառյալ նաեւ արեւածաղիկ վաճառողները) թաքցնում է եկամուտները եւ աղաղակում միայն ծախսերի մասին: Բայց երեւի արեւածաղկի վաճառքը ձեռնտու է երկու կողմերին էլ հավասարապես (վաճառողներին եւ գնորդներին): Այլապես... ազգովին չէինք բաժանվի արեւածաղկի սերմ վաճառողների եւ ուտողների: Վաճառում են ուր պատահի՝ հիմնականում մայթերին կծկված-պոզած տարեց թոշակառուները, վաճառում են աղով կամ առանց աղի, բաժակը 20–25 դրամով, հին լրագրերի մնացորդների կամ, ասենք, գրախանութից էժան գնով ձեռք բերած Կաֆկայի գրքերից բզկտած էջերի մեջ «փաթեթավորելով» եւ առաջարկելով գնորդին: Շրթում ենք դարձյալ ուր պատահի (վկա՝ մայրաքաղաքի զբոսայգիների արեւածաղկի կճեպով ծածկված սալահատակը)՝ փողոցում, տանը, թե աշխատավայրում, աղմկոտ հանրահավաքներում, թե եկեղեցի տանող ճանապարհին: Շրթում ենք ուսելուց առաջ եւ հետո, հեռուստացույց դիտելիս, թե ատամները կարիքից պատշտանող հերթական մասակը մայթին թքելուց հետո:

Ոչ պաշտոնական վիճակագրական աղբյուրները վկայում են, որ արեւածաղկի «բիզնեսը» բուռն վերելք է ապրում հատկապես աղմկոտ ու մարդաշատ հանրահավաքների օրերին, երբ զայրացած միտինգավորների շարքերի միջով անցուդարձ անող արեւածաղիկ վաճառողներն առաջարկում էին մասնակիցներին մի փոքր նյարդերը հանգստացնել— շրթելով: Եվ այս հարցում նրանք գերազանցում էին անգամ կարկանդակ վաճառողներին, ասենք, առանց դրա էլ կարելի է յուղ գնալ, իսկ առանց հոգեկան անդորրի՝ ոչ:

Եվ եթե նկատի ունենանք, որ վերջին ամիսներին հանրահավաքներ տեղի չեն ունենում (այն էլ բազմամարդ), ապա սա առաջին հերթին հարվածում է արեւածաղիկ վաճառողների շահերին, բայց ոչ նրա մոլի սիրահարներին, ովքեր այսուհետ էլ շարունակում են անխնա «կճեպածածկել» երեւանի մայթերն ու պուրակները...

ԹԱԳՈՒՀԻ ՀԱԿՈԲՅԱՆ

Նիկոլայ Բորդյուժա. «Մենք համատեղ ենք պաշտպանում սահմանը...»

Սկիզբը էջ 1

«Ազգի» անունից 2 հարց ուղղեցի պրն Բորդյուժային. 1. Որքանո՞վ են հավաստի հայ-թուրքական սահմանից դուս սահմանապահներին դուրս բերելու լուրերը, 2. Ինչպե՞ս է Ռուսաստանն աջակցելու իր շահերը ադրբեջան-թուրքական եւ ադրբեջան-ռուսական սահմանների փաստացի թափանցիկության պայմաններում: Ահա պրն Բորդյուժայի բառացի պատասխանը. «Հայաստանից Ռուսաստանի Դաշնության սահմանապահ զորախմբի դուրս բերման մասին լուրերը ճիշտ չեն: Մենք այսօր խոսում ենք այդ զորախմբի կառուցվածքի նորացման մասին, հաշվի առնելով նրա ֆինանսավորման իրական հնարավորությունները, բայց՝ ոչինչ ավելի: Ոչ ոք չի խոսել այն մասին, թե այստեղից պետք է հանվի ռուսական դրոշը: Մենք համատեղ ենք պաշտպանում այդ սահմանը եւ համատեղ էլ պետք է պաշտպանենք: Դուրս գալու մասին խոսք չի գնում: Ավելին, դուք գիտեք, որ վերջին ժամանակներս տեղի են ունեցել դաշնային սահմանապահ ծառայության տնօրենի եւ պաշտպանության նախարարի այցերն այստեղ: Կան համագործակցության կոնկրետ պայմանավորվածություններ ինչպես պաշտպանության, այնպես էլ սահմանային անվտանգության ապահովման տեսակետից: Եվ դրանք իրականացվում են, մանավանդ որ համապատասխան համաձայնագրեր ստորագրել ենք: Ինչ վերաբերում է սահմանների թափանցիկությանը, ապա ես չէի համարձակվի գնահատել ադրբեջան-թուրքական սահմանի թափանցիկությունը, բայց գիտեմ, որ ՈԴՆ Ադրբեջանի հետ իր սահմանը պաշտպանում է, այնտեղ կան համապատասխան զորամիավորումներ, եւ լրիվ թափանցիկության մասին խոսելու հիմք չկա»:

Հետաքրքիր է սեպտեմբերի 16-ին Թբիլիսիում Վրաստանի, Ադրբեջանի եւ Ուկրաինայի սահմանապահ զորքերի հրամանատարների միջեւ ՎՈՒԱՄ-ի շրջանակներում ստորագրված պայմանագրի էության մասին մեր լրագրողներից մեկի առաջադրած հարցի արձագանքը: Երեք երկրների ներկայացուցիչները, իրար բերանից խոսք խլելով, փորձում էին լսարանին համոզել, որ դա «ուղղված չէ որեւէ երրորդ կողմի դեմ»:

Մինչեւ ասուլիսը հայտնի դարձավ, որ Ադրբեջանի սահմանապահ զորքերի շտաբի պետ, գնդապետ Ինայաթ Խալիլովը նիստում հանդես է եկել ինչ-որ «հատուկ հայտարարությամբ»: Այդ առթիվ տրված հարցին պրն Խալիլովը իր պարտքը կատարած մարդու ինքնագոհությամբ ասաց. «Այո, ես այդպիսի հայտարարություն արել եմ, ասել եմ, որ Ադրբեջանի տարածքի 20 տոկոսը բռնազավթված է Հայաստանի կողմից»: է, Ադրբեջանի ներկայացուցիչը հերթական անգամ պահը բաց չէր թողել Հայաստանի «ագրեսիայի» առթիվ նվնվալու, ամենեւին անհարմար չզգալով, որ ճնշարկված օրակարգը դրա հետ ոչ մի կապ չուներ: Ինչպես վերջում մեզ տեղեկացրեց Հայաստանի սահմանապահ զորքերի հրամանատար, գեներալ-մայոր Լեւոն Ստեփանյանը, Խալիլովի այդ հայտարարությունը նիստում, բնականաբար, որեւէ ուշադրության չէր արժանացել: Ի դեմ, գնդապետ Խալիլովի եւ գեներալ Ստեփանյանի միջեւ մի փոքրիկ բանավեճ ծավալվեց արդեն բուն ասուլիսի ընթացքում: Առաջինը փորձում էր հավաստել, թե «Ադրբեջանի եւ Հայաստանի միջեւ սահմանները հաստատվել են 1979 կամ 1980 թթ.», որին ի պատասխան գեներալ Ստեփանյանը «անգրագիտության վերացման» կարճառոտ մի «դասախոսություն» կարդաց ադրբեջանցի գնդապետի գլխին, նրան հիշեցնելով, որ «այն ժամանակ երկու երկրների միջեւ եղած սահմանը պետական սահման չէր եւ սահմանային ռեժիմով չէր կարգավորվում»: «Դա բանավեճի հարց է» պատճառաբանությամբ դուրս պրծնելով անհարմար վիճակից, պրն Խալիլովը ներկայացրեց իր երկրի տեսակետը, ըստ որի թրեմ «դրսի ու ներսի սահմաններ» չեն ճանաչում եւ առաջարկում են բոլոր սահմանների, այդ թվում ԱՊՀ երկրների ներքին սահմանների վրա տարածել նույն սահմանային ռեժիմը»: Բայց նա սխալված էր ափսոսանքով խոստովանել, որ «մեր գործընկերները համաձայն չեն դրան»:

Ավելացնեմ, որ բոլոր հյուրերը գոհ էին երեւանյան հանդիպման կազմակերպման մակարդակից, ուր ճնշարկվել էր նաեւ կազմակերպական հարց՝ Նիկոլայ Բորդյուժայի փոխարեն ԱՊՀ երկրների սահմանապահ զորքերի հրամանատարների խորհրդի նախագահ էր ընտրվել Ռուսաստանը ներկայացնող գեներալ-գնդապետ Կոնստանտին Տուսկին:

Մաթեոսյան կրթավճարը հովանավորում է ուսանողների հերթական տասնյակին

ՀՕՖ հայաստանյան գրասենյակում երեկ վավերացված պայմանագրերով մեկնարկեց կրթամշակութային ծրագրերում համեմատաբար վերջերս (նախորդ տարի) ընդգրկված «Մաթեոսյան կրթավճար» ծրագրի հերթական փուլը: Ընդունելության ճնշությունների բարձր արդյունքներով անվճար ուսուցման համակարգից դուրս մնացած 10 դիմորդներ ՀՕՖ հովանավորությամբ հնարավորություն ստացան ֆեղափոխվելու վճարովի համակարգ՝ ասպվածաբանություն, իրավագիտություն, միջազգային հարաբերություններ, տնտեսագիտություն, լրագրություն եւ կառավարում մասնագիտություններով:

Ուսանողների երջանիկ տասնյակն ընտրվել է դիմումներ ներկայացրած 74 դիմորդներից՝ ծրագրի վերանայող հանձնաժողովի եզրակացության հիման վրա: Հանձնաժողովը, մանրակրկիտ ճնշարկելով բոլոր դիմումները, առաջնորդվել է 2 չափանիշով՝ առաջադիմություն (ընդունելության ճնշություններում վաստակած միավորների հանրագումարը) եւ սոցիալական ապահովության, ավելի ճիշտ՝ անապահովության աստիճանը: Ըստ որում, եթե առաջինի պարագայում ընտրությունը դյուրին էր, ապա դիմորդների կարիքավորությունը գնահատելու համար ՀՕՖ աշխատակիցներն այցելել են բոլոր 74 դիմորդների բնակարանները եւ տեղում ծանոթացել պայմաններին:

Պայմանագրերն ստորագրելով, ՀՕՖ ղեկավարությունը շնորհավորեց հաղթողներին՝ ամենայն բարիք եւ հաջողություն մաղթելով նրանց: Պայմանագիրն, ի դեմ, արտոնություններ է նաեւ պարտավորություններ է սահմանում ուսանողների համար. անբավարար առաջադիմության դեպքում կխզվի եւ օգնությունը կդադարեցվի (կարծում ենք եւ հուսով ենք, որ բանը դրան չի հասնի):

Հնգամյա տեւողությամբ ծրագիրը կշարունակվի եւս 3 տարի՝ ամեն տարի հերթական տասնյակով համալրելով ՀՕՖ հովանավորությունից օգտվող ուսանողների թիվը, որոնց ցուցակը հրապարակվեց ՀՕՖ գրասենյակում ուսանողների հետ տեղի ունեցած հանդիպման ընթացքում:

Լ. Պ.

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակվում է տարի
Հիմնադիր եւ հրատարակիչ
«Ազգ» թերթի հիմնադիր խորհուրդ
Երեւան 375010, Հանրապետության 47
ֆաքս 562941, AT&T (3742) 151065,
e-mail INTERNET: azg2@arminco.com
Գլխավոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՒԵՏԻՔԵԱՆ / հեռ. 521635
Խմբագիր
ՊԱՐՈՅՐ ՅԱԿՈԲԵԱՆ / հեռ. 529221
Տնօրէն
ՀՐԱՅՐ ՋՕՐԵԱՆ / հեռ. 562863
Հաճախորդչային ծառայութիւն / 581841
Apple Macintosh
հաճախորդչային շարուածք
«Ազգ» թերթի
Յղումը «Ազգին» պարտադիր է
Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում
«AZG» DAILY NEWSPAPER
Editor
H. AVEDIKIAN / phone: 521635
47 Hanrapetoutian st.,
Yerevan, Armenia, 375010

digitised by A.R.A.R.@

ԱԶԳ

ՈՒՇԱԳԻՐ

Սկիզբը էջ 1

Մեծամասնական-համամասնական հարաբերակցությունը 30–101 է: Այսինքն՝ 30 մեծամասնական եւ 101 համամասնական: Չնայած ամրագրված այս հարաբերակցությանը, միավորյալ ընդդիմությունը պատրաստ է բանակցություններ ընթացքում համաձայնել 51–80 տարբերակին: 51 մանդատը մեծամասնական ընտրակարգին տվող վերջին եզրագիծն է: Միավորյալ ընդդիմությունը, որին իրենք միտված են, «Երկրապահը» այն ծանր միջուկն է, կենտրոնամետ ուժը, որը ձգտում է նվազագույնի հասցնել ցուցումները: Միաժամանակ նա փաստեց, թե «Երկրապահը» պատրաստ է ցանկացած երկխոսության, բայց իր կողմից համապատասխան:

Միասնական ընտրական օրենսգրքի նախագծին միանալու հարցը Ռազմիկ Մարտիրոսյանին մի պահ մտահոգեց, այնուհետեւ նա ասաց. «Ամեն դեպքում բացառվում է միասնական տարբերակը»: Ռազմիկ Մարտիրոսյանը փորձեց մեղմել գնահատականը՝ պատճառաբանելով, որ «Երկրապահն» առայժմ չի հանի իր տարբերակը, հանգի դեմ է մեխանիկական միացումների: Եթե փորձենք կանխատեսել ձայների հնարավոր բաշխումը օրենսգրքի քվեարկության ժամանակ, ապա ստեղծվում է մի իրավիճակ, որ «Երկրապահը» կունենա փխրուն գերազանցություն, այն էլ շնորհիվ «Բարեփոխումների»: «Ազգի» հարցին ի պատասխան «Բարեփոխումների» նախագահ Արմեն Մարտիրոսյանը հայտնեց, թե ինքն անձամբ դեմ է զուտ կուսակցական հանձնաժողովներին, եւ կարծում է, թե պետությունը՝ պատգամավորների մակարդակով, պետք է հավասարակշռություն ստեղծի եւ աջահովի պետության պատասխանատվությունն ընտրությունների կայացման համար: «Երկրապահը» կողմ է կուսակցական-մասնագիտական հանձնաժողովներին, որ մասնագետները պետական պատգամավորներ են: Ինչ վերաբերում է համամասնական-մեծամասնական ընտրական օրենսգրքի նախագծերից եւ ոչ մեկը: Արմեն Մարտիրոսյանն ասաց. «Մենք որոշել ենք սպասել, երբ խոշոր կետաձկները կոչարգեն, իսկ մենք կատանձնենք դատավորի դերը՝ մեր 11 ձայնով»: Այսպիսով, «Երկրապահի» 78 ձայնին կարող են գումարվել անկախ պատգամավորների մի մասը, ինչպես նաեւ «Բարեփոխումների» 8–9 ձայնը (Ռոբերտ Ենգոյանը եւ Վոլոդյա Բաղալյանը՝ իբրեւ Հայաստանի ժողովրդական կուսակցության անդամներ, կքվեարկեն միասնական տարբերակի օգտին):

Քաղաքական շոուների նախադրյալներ

Եթե կա մեկ հարց, որի շուրջ ԱԺ-ում գրեթե բոլորը համախումբ են, ապա դա «Կոնյակի» գործով արտահերթ նստաշրջան չհրավիրելու նախագահի քայլը հակասահմանադրական համարելու դիրքորոշումն է: Հինգշաբթի ճեպազրույցին ներկայացած գրեթե բոլոր կուսակցությունները կամ իրենց, կամ անձնապես ղեկավարների անունից խոստովանեցին, որ նստաշրջան գումարել անհրաժեշտ էր: ԻՄ անդամ Դերենիկ Չեչնալվանդյանը նրբանկատ էր՝ մենք ստորագրել ենք Սահմանադրական դատարան դիմելու այն փաստաթղթի ներքո, որը մատնանշում է նախագահի կողմից Սահմանադրության խախտումը, բայց պապատում ենք ՍԴ գնահատականին: Արձանագրել ենք փաստը՝ առժամանակ զերծ մնալով գնահատականներից: «Երկրապահը» եւս պպատում է ՍԴ գնահատականին՝ ուժերի նույն դասավորությամբ. բաց երկրապահներ ի սկզբանե ստորագրել են նախագահի հակասահմանադրական քայլը վկայակոչող փաստաթուղթը: Ամենը, Արմեն Մարտիրոսյանի բնութագրմամբ, քաղաքական շոուների նախադրյալներ կան եւ կենտրոնամետության ձգտումներ:

ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎ

«Կարեւորը կոտրվող աթոռից չընկնելն է»

Բյան շարքում առայժմ փոքր-ինչ վերապահ է ԻՄ դիրքորոշումը, որը շրջանառության մեջ է դրել ընտրական օրենսգրքի ինքնուրույն նախագիծ: Սակայն Դերենիկ Չեչնալվանդյանը երեկ տեղի ունեցած ճեպազրույցում հավաստիացրեց, որ եթե գործընկերներն ընդունեն ընտրական ցուցակների սկզբունքը, եւ փոխզիջումը լիակատար լինի, ապա իրենք պատրաստ են շրջանառությունից կհանեն օրենսգրքի իրենց նախագիծը: Ընտրական ցուցակի գաղափարն ադեն պատրաստանվել է գրեթե բոլոր համախմբված կուսակցությունների կողմից, որոշակի բյուրեղանումներ կան լոկ Էդվարդ Եգորյանի հետ: Մանրամասնենք՝ ընտրական ցուցակը նշանակում է, որ ընտրություններից 20–25 օր առաջ քաղաքացիներն իրենց անձնագրերով կգնան-կգրանցվեն՝ ընտրություններին մասնակցելու համար, այնուհետեւ այդ ցուցակները կուղարկվեն մարզային ընտրական հանձնաժողովներ, կմուտքագրվեն համակարգիչ եւ վերջնական կնշգրտվեն: Ընտրությունների օրը որեւէ քաղաքացի չի կարողանա քվեարկել, եթե վաղօրոք ընդգրկված չէ այս ցուցակներում եւ չունի ընտրական կտրոն: «Երկրապահի» թվաքանակը մեզ չի վախեցնում... «Երկրապահում» կան հուսալի մարդիկ», եզրափակեց քվեարկության իր գնահատականը Կոմկուսի ներկայացուցիչ Գագիկ Թադեւոսյանը:

Երբ վիճում են կետաձկները, տահում են մանրաձկները

Հինգշաբթի բացվեց անցած նստաշրջանից ժառանգություն մնացած խորհրդարանական խումբ-խմբակցությունների ճեպազրույցների շղթան: «Երկրապահը» ներկայացավ ի դեմս Ռազմիկ Մարտիրոսյանի (ՌԴ, ԱԱ եւ պատգամավորական հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ): Ռազմիկ Մարտիրոսյանը սահմանեց «Երկրապահի» այն

«Ամեն դեպքում բացառվում է միասնական տարբերակը»: Ռազմիկ Մարտիրոսյանը փորձեց մեղմել գնահատականը՝ պատճառաբանելով, որ «Երկրապահն» առայժմ չի հանի իր տարբերակը, հանգի դեմ է մեխանիկական միացումների: Եթե փորձենք կանխատեսել ձայների հնարավոր բաշխումը օրենսգրքի քվեարկության ժամանակ, ապա ստեղծվում է մի իրավիճակ, որ «Երկրապահը» կունենա փխրուն գերազանցություն, այն էլ շնորհիվ «Բարեփոխումների»: «Ազգի» հարցին ի պատասխան «Բարեփոխումների» նախագահ Արմեն Մարտիրոսյանը հայտնեց, թե ինքն անձամբ դեմ է զուտ կուսակցական հանձնաժողովներին, եւ կարծում է, թե պետությունը՝ պատգամավորների մակարդակով, պետք է հավասարակշռություն ստեղծի եւ աջահովի պետության պատասխանատվությունն ընտրությունների կայացման համար: «Երկրապահը» կողմ է կուսակցական-մասնագիտական հանձնաժողովներին, որ մասնագետները պետական պատգամավորներ են: Ինչ վերաբերում է համամասնական-մեծամասնական ընտրական օրենսգրքի նախագծերից եւ ոչ մեկը: Արմեն Մարտիրոսյանն ասաց. «Մենք որոշել ենք սպասել, երբ խոշոր կետաձկները կոչարգեն, իսկ մենք կատանձնենք դատավորի դերը՝ մեր 11 ձայնով»: Այսպիսով, «Երկրապահի» 78 ձայնին կարող են գումարվել անկախ պատգամավորների մի մասը, ինչպես նաեւ «Բարեփոխումների» 8–9 ձայնը (Ռոբերտ Ենգոյանը եւ Վոլոդյա Բաղալյանը՝ իբրեւ Հայաստանի ժողովրդական կուսակցության անդամներ, կքվեարկեն միասնական տարբերակի օգտին):

Քաղաքական շոուների նախադրյալներ

Եթե կա մեկ հարց, որի շուրջ ԱԺ-ում գրեթե բոլորը համախումբ են, ապա դա «Կոնյակի» գործով արտահերթ նստաշրջան չհրավիրելու նախագահի քայլը հակասահմանադրական համարելու դիրքորոշումն է: Հինգշաբթի ճեպազրույցին ներկայացած գրեթե բոլոր կուսակցությունները կամ իրենց, կամ անձնապես ղեկավարների անունից խոստովանեցին, որ նստաշրջան գումարել անհրաժեշտ էր: ԻՄ անդամ Դերենիկ Չեչնալվանդյանը նրբանկատ էր՝ մենք ստորագրել ենք Սահմանադրական դատարան դիմելու այն փաստաթղթի ներքո, որը մատնանշում է նախագահի կողմից Սահմանադրության խախտումը, բայց պապատում ենք ՍԴ գնահատականին: Արձանագրել ենք փաստը՝ առժամանակ զերծ մնալով գնահատականներից: «Երկրապահը» եւս պպատում է ՍԴ գնահատականին՝ ուժերի նույն դասավորությամբ. բաց երկրապահներ ի սկզբանե ստորագրել են նախագահի հակասահմանադրական քայլը վկայակոչող փաստաթուղթը: Ամենը, Արմեն Մարտիրոսյանի բնութագրմամբ, քաղաքական շոուների նախադրյալներ կան եւ կենտրոնամետության ձգտումներ:

Վանաձորում ջրամատակարարման լուրջ պրոբլեմներ կան

Երեկ, սեպտեմբերի 17-ին Վանաձորի քաղաքապետ Անդրանիկ Հարությունյանի հրավիրած մամուլի ասուլիսը նվիրված էր քաղաքի ջրամատակարարմանը: Վանաձորը ջուր է ստանում Նովոսելցովի, Մայմեխի, Ծովասարի եւ Ազատաձորի ջրատարներով: Յուրաքանչյուր ջրատար ապահովում է քաղաքի կոնկրետ բաղամաս, իսկ օդակաձեւ ջրատարի կառուցումը կապված է հսկայական ծախսերի հետ: Ջրամատակարարման քաղաքային ցանցը 214,8 կմ է, որի 87,8 տոկոսը 30 տարուց էլ հին է, մինչդեռ ցանցը նախատեսված է ընդամենը 20 տարվա շահագործման համար: Ջրագծերի մաշվածության եւ այլ պատճառներով միայն Նովոսելցովոյի ջրատարից բաղամասերում ջրի կորուստները կազմում են 60 տոկոս: Այդ պատճառով չի պահպանվում ջրամատակարարման գրաֆիկը, վիճակը ավելի է վատթարանում հատկապես ձմռանը: Ընդհանրապես ջրի ծախսի նորման մայրաքաղաքում նախատեսված է 250 լ, իսկ Վանաձորում եւ այլ բնակավայրերում 100: Քաղաքապետը նշեց, որ անցյալ տարվանից, երբ ստեղծվել է համայնքային ջրմուղ ձեռնարկությունը, զգալիորեն բարելավվել է վարձավճարների գանձման վիճակը: Այդ հարցը զգալիորեն կկարգավորվի ջրաչափերի տեղադրումով, որի համար բնակչությունը վճարունակ չէ: Ամայժմ Վանաձորում ջրաչափեր են տեղադրված ընդամենը 40 բնակելիներում: Ջրմուղ ձեռնարկության պարտքերն այսօր հասնում են 46,8 միլիոն դրամի եւ քաղաքային իշխանությունները չեն կարող վերցնել իրավիճակի ողջ պատասխանատվությունը: Բոլոր միջոցները կձեռնարկվեն հիմնարկ-ձեռնարկությունների նկատմամբ, որոնց պարտքերը հասնում են 20 մլն դրամի: Մտահոգիչ էր պրն Հարությունյանի հաղորդած այն լուրը, որ Ազատաձորի ջրատարն ընդունում է նաեւ բաց ջրեր, որոնց վարակազերծումն իրականացնելու համար չեն բավարարում տեխնիկական միջոցները: Նույն վիճակում է Մայմեխի ջրատարը, ջրամատակարարումն անկայուն է նաեւ մուտք գործող ջրի քանակի տատանումների պատճառով կազմված եղանակի, մթնոլորտային տեղումների հետ: Անցյալ տարի նոր ջրագծերի փոփոխման, ջրամատակարարման բարելավման նպատակով քաղաքապետը մի շարք ծրագրեր իրականացրեց սոցիալական ներդրումների հիմնադրամի ֆինանսավորմամբ: Նորոգվեց եւ փոխվեց 7,5 կմ ջրագիծ եւ կոյուղագիծ: Զգալի աշխատանքներ են իրականացվել նաեւ Փրկենք երեխաներին կազմակերպության եւ ՄԱԿ-ի պարենային ծրագրի ֆինանսավորմամբ կամ միջոցներով: Յավոք, այս տարի Վանաձորի քաղաքապետարանը բոլոր ծրագրերն իրականացնում է միայն սեփական միջոցներով, համայնքի բյուջեի պահուստային ֆոնդից 35 մլն դրամ է հատկացվել քաղաքի ջրամատակարարման ցանցը վերանորոգելու, հրատապ հիմնահարցերը կարգավորելու համար: Քաղաքապետը ներկայացրեց ջրատարները հզորացնելու, ջրամատակարարումը բարելավելու լուրջ ծրագիր, որոնք ապահովաբար պետք է իրականացվեն խուսափելու համար ավելի աղեղալի իրավիճակից:

ՄԱՆՎԵԼ ՄԻՍԿԱՅԱՆ

ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ

Անվճար եւ բարձրակարգ բուժխորհրդատվություն աղեսի գոտու բնակիչներին

Մինչ Հայաստանի ամերիկյան համալսարանում շարունակվում է Սղիտակի երկրաշարժի 10-ամյակին նվիրված համաժողովը, ՀԳՄ-ում երեկ մեկնարկեց այդ տխուր տարելիցին նվիրված եւս մեկ միջոցառում՝ Հայաստանի գիտությունների բժշկական ակադեմիայի (ԳԲԱ) տարեկան նստաշրջան-գիտաժողովը «Հայաստանի երկրաշարժի հետեւանքների բժշկական տեսակետներ–10 տարի անց» թեմայով:

Ինչպես «Ազգին» տեղեկացրեց ՀԳԲԱ փոխնախագահ, բժշկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, հանրապետության գլխավոր թերապեւտ եւ բժշկական համալսարանի ներքին հիվանդությունների ամբիոնի վարիչ Վիլեն Հարությունյանը, գիտաժողովը նպաստակ ունի գնահատել եւ ամփոփել աղեսի գոտու բնակչության շրջանում 10 տարի առաջ ստեղծված հոգեբանական, ներքին օրգանների գործունեության խախտումների, սթրեսների ժամանակագրությունը եւ զարգացումները, հետվնասվածքաբանական եւ հետվիրաբուժական իրավիճակի շարժընթացը աղեսից տուժած քաղաքացիների շրջանում:

Գիտաժողովը ողջունեցին ՀՀ ԳԲԱ նախագահ, ուռուցքաբանողաբոլոգ ակադեմիկոս Լեւոն Մկրտչյանը, առողջապահության նախարար Գագիկ Սամբոլցյանը, Ռուսաստանի արտակարգ իրավիճակների կենտրոնի գլխավոր մասնագետ Վլադիմիր Ռոզինովը եւ բժշկական աղեսների «Զաբչիսա» համառուսական կենտրոնի գլխավոր բժիշկ Իրինա Նազարովան: Գիտաժողովում հնչեցին բազմաբնույթ զեկույցներ, որ վերաբերում էին երկրաշարժի հետեւանքներին եւ դրանց հաղթահարման ամենաստարբեր ոլորտներին: Պրն Հարությունյանի զեկույցն, օրինակ, ընդհանրացնում էր աղեսի գոտու բնակչությանը ցուցաբերված բերապետիկ օգնությունը Ստեփանավանի մոտ՝ ներքին օրգանների հիվանդությունների ոլորտում, ակադեմիկոս Հովհաննես Սարուխանյանի զեկույցը՝ վիրաբուժական ծառայությունների դերը եւ հիվանդների հետվիրաբուժական կազմի փոփոխությունները: Ճանաչված հոգեբան պրոֆեսոր Աղուզումցյանի զեկույցը շոշափում էր երեւույթի հոգեբանական, ակադեմիկոս Ռուբեն Հարությունյանի զեկույցը՝ կենսաբանական փոփոխությունների, պրոֆեսոր Գրիգորի Ղազարյանի զեկույցը՝ էնդոկրին փոփոխությունների բնագավառը:

Գիտաժողովը կշարունակվի այսօր՝ Գյումրիի դրամատիկական թատրոնի շենքում: Շիրակի մարզպետ Արարատ Գոմցյանի հրավերով աղեսի գոտու «կենտրոն» կմեկնի ԳԲԱ ամբողջ կազմը՝ հանրապետության բժշկագործնական համակարգի 20 էլիտար մասնագետներ (գիտահետազոտական ինստիտուտների ղեկավարներ, ամբիոնների վարիչներ, ճանաչված գիտնականներ): Այցի նպատակը ոչ միայն գիտաժողովի աշխատանքները աղեսի գոտի տեղափոխելն է, այլեւ Շիրակի մարզի բնակիչներին անվճար խորհրդատվական բարձրակարգ բուժօգնություն կազմակերպելը: Իտալացիների կողմից կառուցված Սամարիտե հիվանդանոցի բազայի վրա: Այս միջոցառումը, որն Հարությունյանի կարծիքով, երեւույթ է՝ հանգի միայն բժշկական, այլեւ հոգեբանական օգնություն է աղեսի գոտու բնակչությանը:

Լ. Պ.

Գյումրիից՝ սայլակներով մինչեւ Երեւան

ՀՀ տցառ նախարարությունը, «Ամասիացի» բարեգործական ընկերությունը եւ հաշմանդամների «Փյունիկ» միությունը «Եվրասան ույուս» կազմակերպության հովանավորությամբ նախաձեռնել են հասարակություն-հաշմանդամներ «սերտաճումն» աղահովելուն միտված հերթական մարդասիրական ակցիան՝ Գյումրի-Երեւան եռօրյա գերմարաթոնը, որը կմեկնարկի սեպտեմբերի 19-ին ժամը 11-ին Գյումրիի կենտրոնական հրապարակից եւ կավարտվի սեպտեմբերի 21-ին ժամը 12-ին՝ Երեւանի Հանրապետության հրապարակում: Էջմիածնի, Երեւանի, Սղիտակի եւ Գյումրիի հաշմանդամներից կազմված 5 հոգանոց թիմը՝ Հայկ Աբգարյան, Ալիկ Բայանդուրյան, Արթուր եւ Տիգրան Գրիգորյաններ, Հովհաննես Լուլոյան, 120 կմ-ոց այս երթուղին կհաղթահարի սայլակներով՝ բժիշկների, պետավտտեսչության, տցառ նախարարության աշխատակիցներից համալրված ստվար (մոտ 20 հոգանոց) խմբի ուղեկցությամբ: Մարաթոնի անցկացմանը կաջակցեն մարզպետարանները՝ ճանապարհի տարբեր հատվածներում համապատասխան ընդունելություն ապահովելով մասնակիցներին եւ ուղեկցողներին եւ, բնականաբար, հոգալով նրանց գիշերելու, սնվելու եւ կենցաղային մյուս հոգսերը:

Տցառ նախարար Գագիկ Եգանյանը, որ հարմար էր գտել այդ առիթով ասուլիս հրավիրել՝ հասարակայնության ուշադրությունը հաշմանդամների հիմնահարցերի վրա հերթական անգամ սեւեռելու համար, լրագրողներին մեկնեց գերմարաթոնի «գերնպատակը»: «Խնդիրը միայն այն չէ, որ մարաթոնի մասնակիցներն իրենց հասարակության առավել լիիրավ անդամ զգան, այս ակցիան ավելի շուտ պետք է հասարակությանը: Այստեղից՝ մարաթոնի նշանաբանը՝ «Հասարակությունը բոլորի համար», ասաց պրն Եգանյանը՝ հայտնելով, որ մարաթոնի մասնակիցները երրդ օրն է մարզվում են նախարարության բժշկավերականգնողական կենտրոնում՝ նախապատրաստվելով ուժերի մեծ լարում պահանջող միջոցառմանը: Մարաթոնի ամենափորձառու անդամը Արթուր Գրիգորյանն է Սղիտակի շրջանի Գոգարան գյուղից, որը 1994 թ. մասնակցել է Սանկտ Պետերբուրգ-Ալմա Աթա գերմարաթոնին, իսկ 1996-ին՝ սայլակով հաղթահարել Էլբրուսի գագաթը: Մարաթոնի մեկ այլ մասնակից՝ Հովհաննես Լուլոյանը Գյումրիից, հանդես է եկել Երեւան-Մոսկվա մարաթոն անցկացնելու նախաձեռնությամբ: Այնպես որ չի բացառվում, որ Գյումրի-Երեւան «կարճ դիստանցիային», ինչպես նշեց նախարարը, հաջորդի Երեւան-Մոսկվա հեռավոր երթուղին, որ ջանքերի եւ միջոցների առավել մեծ ներդրում կպահանջի մասնակիցներից եւ կազմակերպիչներից: Ի պատասխան «Ազգի» հետաքրքրասիրությանը («Ինչո՞ւ մարաթոնում ընդգրկված չեն կանայք»), պրն Եգանյանը պարզաբանեց, այդպիսի մտահոգություն եղել է, նույնիսկ քննարկվել է կոնկրետ թեկնածություն, սակայն, որոշ «նորթ հարցերի» պատճառով մարաթոնը «կանացիացնելու» տարբերակը մերժվել է:

Ավելացնենք, որ մարաթոնը նվիրված է Հայաստանի անկախության 7-րդ եւ Սղիտակի երկրաշարժի 10-րդ տարելիցին, եւ մեր կողմից բարի երթ մաղթենք մարաթոնի մասնակիցներին՝ հույս հայտնելով, որ նրանց հետագա երթուղիները կընդլայնվեն՝ հասնելով, ասենք, Փարիզ կամ հեռավոր արտասահմանի այլ մայրաքաղաքներ:

ԼՈՒԻԶ ՊՈՂՈՍՅԱՆ

digitised by A.R.A.R.@

ԱԶԳ

90-ամյակ

Վիկտոր Համբարձումյանի դասերը

1968 թ. վերջերին Կամչատկայում նամակ ստացա Կահիրեից: Հայկական «Ջահակիր» թերթի աշխատակից մեր հայրենակիցները հայտնում էին, որ Նորվեգացի ծովագնաց Թուր Հեյերդալը եգիպտոսում «հնառոճ» նավ է կառուցում, որը Հին եգիպտոսի արեւի աստծո անունով արդեն կոչվում է «Ռա», եւ նա ընտրում է միջազգային անձնակազմ: Անձնակազմում պետք է լիներ բժիշկ՝ անպայման խորհրդային Միությունից: Պարզվեց նաեւ, որ առաստղեւական ճանապարհորդը գիտեր գեներով, ծովերով եւ օվկիանոսներով կամչատկացի երեք ճանապարհորդների կատարած բազմամսյա անցումների եւ այն մասին, որ նրանց մեջ բժիշկ կա: Թուր Հեյերդալը հայտնում էր, որ դիմել է ԽՍՀՄ գիտությունների ակադեմիայի նախագահ Մ. Կելդիշին, խնդրելով գտնել ճանապարհորդ բժշկին: Ընդսմին, մեզ տպատում էին: Մստիսլավ Վսեվոլոդովիչը մեզ անմիջապես ընդունեց: Շուտով թեյ մատուցեցին: Համբարձումյանը դեռ չէր հասցրել բարդրել մեր այցի նպատակը, երբ Կելդիշը անսպասելիորեն ծիծաղեց եւ ասաց. «Վիկտոր Համազասպովիչ, Դուք երեւի մոռացել եք, որ այդ հարցի լուծումը ենթակա է... իրավասությանը»: Ակադեմիայի նախագահը նշեց ազգանունը, կարծեմ Նիկոլաեւ էր: Այլեւս չժպտալով, Կելդիշը նույնիսկ շատ լուրջ հնչեցնելով առաջարկեց համենայն դեպս այցելել Նիկոլաեւին:

Վիկտոր Համբարձումյանը դեռեւս լավատեսորեն էր տրամադրված: Ես մտածեցի, որ լինելով ազնիվ եւ մանկան պես միամիտ մարդ, նա այնքան էլ լավ չէր պատկերացնում, թե ինչու էր Կելդիշը այդպես ուրախ ծիծաղում: Ես Համբարձումյանի հեռեւից լուռ քայլում էի դեպի այն աշխատասենյակը, որի տերը ԽՍՀՄ գիտությունների ակադեմիայում ներկայացնում էր ԽՍՀՄ ՊԱԿ-ը: Իսկ գուցե ավելի ճիշտ կլինի ասել, որ այդ մարդը ՊԱԿ-ում ներկայացնում էր գիտությունների ակադեմիան:

Նիկոլաեւը մեզ թեյ չառաջարկեց: Համբարձումյանը սկսեց պատմել Թուր Հեյերդալի մասին: Աշխատասենյակի տերը միանգամից ծանձրույթի նշաններ դրսեւորեց: Նա մոլորակի մեծ գիտնականին լսում էր առանց առանձնահատուկ ուշադրության, հորանջելով: Ես արդեն հստակ գիտեի, որ նա ամեն ինչին տեղյակ է, մանավանդ որ նախորեին «Լիտերատուրնայա գազետայում» իմ ծավալուն հրապարակումն ուղեկցվել էր «Ռա»-ի գիտարշավին մասնակցելու իմ երազանքի վերաբերյալ խմբագրական նշումով: Այնուամենայնիվ, մասնագիտական զսպվածություն հանդես բերելով, Նիկոլաեւը մինչեւ վերջ լսեց Համբարձումյանին, ապա հանգիստ եւ հնարավորին չափ հարգալիր ասաց. «Թանկագին Վիկտոր Համազասպովիչ, Դուք աշխարհահռչակ գիտնական եք, կենսափորձով իմաստնացած մարդ: Մի՞թե չգիտեք, որ միջազգային անձնակազմում խորհրդային Միությունից պետք է ընդգրկվի... ռուս, որպեսզի մյուս ժողովուրդների ներկայացուցիչների անտեղի նախանձը չհարուցեք: Պատահական չէ, որ այդ սկզբունքը կիրառվում է նաեւ տիեզերքում...»:

Վիկտոր Համբարձումյանը նախ շառագունեց, ապա ասես ուշքի գալով՝ գունատվեց: Ըստ երեւույթին չէր կարողանում հարմար բառեր գտնել: Եվ հանկարծ անպատեհորեն ոչ թե արտաբերեց, այլ ասես թքեց հայերեն «սրիկա» բառը: Եվ անմիջապես էլ թարգմանեց ռուսերեն. «Նեգոդյայ»: Ես ակամա բարձրաձայն ծիծաղեցի: Որպիսի՞ հրճվանք էր տեսնել, թե ինչպես եւ «մեծ», եւ ազգային ակադեմիաների ակադեմիկոսը, աշխարհի 40-ից ավելի ակադեմիաների ու համալսարանների պատվավոր անդամը, Համաշխարհային գիտական խորհրդի նախագահը, 61-ամյա իմաստունն առանց անուղղելի սրիկային ձեռք մեկնելու շրջվեց, ինձ նայեց եւ նույնպես ծիծաղեց: Մենք շարունակում էինք քրքլալ նաեւ ավտոմեքենայի մեջ: Ես հարցրի. «Դուք դիտավորյա՞լ մեղմացրիք «սրիկա» բառի թարգմանությունը»: Նա ազնվորեն խոստովանեց. «Ես ուրախ եմ, որ Դուք ուշադրություն դարձրիք: Ես չէի կարող ակադեմիայի շենքում բարձրաձայն արտաբերել «սվոլոչ» բառը»:

Դրանից հետո ամեն անգամ հանդիպելիս ժպիտով վերհիշում էինք այդ օրը: Միայն մեկ անգամ (դա մեր համատեղ հացադուլի ժամանակ էր) նա ասաց. «Ախր ես հասկանում էի, որ այդ պահին փլուզվում էր մեր մեծ երազանքը: Եվ նույնիսկ այն ժամանակ, երբ մենք ուրախ ծիծաղում էինք, ես տեսնում էի, որ ձեր հոգին խռովահույզ է»:

Չնայած տարիքային զգալի տարբերությանը, մենք առանձնապես մտերմացանք դարաբաղյան շարժման առաջին իսկ օրերին: Կարկառուն գիտնականը, որի մասին գիտական աշխարհում առասպելներ են պատմում, հենց դարաբաղյան շարժման օրերին իրեն դրսեւորեց որպես մեծ քաղաքացի, խիզախ մարդ: Ես երբեք չեմ մոռանա նրա կրքոտ ելույթը Կրեմլի համագումարների պալատում 1989 թ. հունիսի 2-ին՝ ԽՍՀՄ ժողովրդական պատգամավորների առաջին համագումարում: Նախօրեին նա ինձ հրավիրեց իր մոտ եւ, թեյ պատվիրելով, առաջարկեց լսել իր առաջիկա ելույթը: Ընդսմին նա ասաց, որ դեռ ամբողջ երկու օր ժամանակ կա, ուստի կարելի է աշխատել տեքստի վրա:

Տեքստի վրա «աշխատելու» կարիքը չկար: Օրինակ, ի՞նչ կարելի է փոխել հետեւյալ պարբերության մեջ. «Ամբողջ անցյալ տարվա ընթացքում եւ այս տարվա սկզբներին մենք ամեն օր իմանում էինք, թե ինչպիսի խռովք է առաջացել Լեռնային Ղարաբաղի ժողովուրդը, որի հալածանքները շարունակվում են արդեն քանի տասնամյակ եւ որն անօրինական կերպով հեռացվել է Հայաստանից»: Իհարկե, կարելի էր խմբագրել, խուսափելով նույն նախադասության մեջ «որը» բառի կրկնությունից: Բայց, Աստված վկա, ծեռս չէր բարձրանում հանճարի ոճին դիպչելու:

Ինձ համար գլխավորն այն էր, որ մեկ-երկու օր հետո այդ միտքը բարձրաձայն արտահայտելու է ինքը՝ Վիկտոր Համբարձումյանը եւ դա անելու է համագումարների պալատում, որի դահլիճում բանախոսին լսելու են ոչ միայն ԽՍՀՄ բոլոր ժողովրդական պատգամավորները, այլեւ հազարավոր հյուրեր: Ելույթները ուղիղ եթերում հեռարձակվում էին ամբողջ Խորհրդային Միությունում եւ «Ինտերվիդենիեի» ալիքներով: Հիշում եմ, Վիկտոր Համբարձումյանը ժպտալով ասաց. «Նախագահողը ինձ ձայն կտա, կնշի իմ անունը, եւ մինչ ես կմոտենամ ամբիոնին, ներկաները կծափահարեն: Բայց երբ ավարտեմ ելույթս, արդեն կլսվեն հատուկենտ ծափահարություններ: Ես միշտ էլ վատ եմ ելույթ ունենում, ինձ չի հաջողվում հստակորեն վերջնամասը: Ես առհասարակ թլվատ եմ...»: Ես ընդհատեցի, ասելով, թե. «Սխարովը նույնպես թլվատ է, բայց կարգին բաներ է ասում: Հիմա մի օրինակ կբերեմ, եւ Դուք կհամոզվեք, որ իսկական հրապարակախոս եք»: Ես բարձրաձայն կարդացի նրա ելույթի հատվածներից մեկը. «Ղեկավարությունը եւ իշխանության ապարատները ստեղծված են ժողովրդին ծառայելու համար: Դա նրանց սրբազան պարտականությունն է: Իսկ պարտականությունների հաջող կատարման համար դրանք պետք է հստակորեն սահմանված լինեն: Պարտականությունների եւ դերերի հստակ ու ստույգ բաշխումը բացարձակապես անհրաժեշտ է...»: Եվ ավելացրի. «Ախր սա իսկական հրապարակախոսություն է»:

Երկու օր անց այդ եւ մյուս պարբերությունները հնչեցին համագումարի ամբիոնից, ներկաներին ապշեցնելով այն ժամանակների առումով իրենց թարմ եւ անսպասելի մտքերով: Միայն ակադեմիկոս Համբարձումյանը կարող էր պատշտպանել «չինովնիկին»: «Ի դեպ, չգիտես ինչու մեզ մոտ «չինովնիկը» վատ բառ է համարվում: Ոչ, չինովնիկը նախեւառաջ մարդ է, որը կատարում է իրեն հանձնարարված միանգամայն որոշակի պարտականությունները»:

Խոսելով պարտականությունների մասին, բանախոսը սահուն կերպով անցավ իրավունքների թեմային, այն լուսաբանելով ժամանակի ամենահրատապ օրինակով. «Եթե խորամուխ լինենք Ղարաբաղի հարցին, ապա վեճի պատճառը պարզ կդառնա: Հայ ժողովրդի գիտակցության մեջ 20-ական թվականներին Հայաստանի կազմից Ղարաբաղի անօրինական, հակասահմանադրական դուրսբերումը նույնպես բխում էր «գլխավորը իրավունքի բռնատիրումն է» սկզբունքից: Այսինքն տարածքի նկատմամբ իրավունք ձեռք բերելով, սկսել այդ տարածքի հայաթափումը: Իսկ երբ հայաթափումը կավարտվի, ինչպես արդեն արվել է Նախիջեւանում, թող հետո ասեն ինչ ուզում են: Միեւնույն է, գործն արդեն արված կլինի»:

Ողջունելով Աֆղանստանից զորքերի դուրսբերումը, մեծ գիտնականը ներկաների բուռն ծափահարությունների ներքո խոսում էր ոչ միայն ամբողջ Խորհրդային Միության, այլեւ առանձին ժողովուրդների շահերի մասին: Կրկին բերեց իր ճշգրտությամբ ու հստակությամբ եզակի հետեւյալ օրինակը. «Երբ նախկին արտգործնախարար Սոլոդովը ժամանակին հայտարարեց, թե հայ ժողովուրդը հրաժարվում է Կարսի մարզը եւ 1915 թ. ցեղասպանության (որը լավ հայտնի է ամբողջ աշխարհին) տարածը ես ստանալու հավակնություններից, նա սխալ էր: Նա անգթորեն ոտնահարում էր Խորհրդային Միության ժողովուրդներից մեկի զգացմունքներն ու շահերը»:

Կողքս նստած Արկադի Վոլսկին Համբարձումյանի ելույթից անմիջապես հետո թեթեւակի իմ կողմը թեքվելով, ցածրաձայն ասաց. «Սա ոչ թե մեծ գիտնականի, այլ մեծ պատմաբանի, պետականագետի եւ հրապարակախոսի ելույթ է»: Ես պատասխանեցի Անտիկ աշխարհում հայտնի ձեւակերպմամբ. «Մեծ մարդը մեծ է ամեն ինչում»: Եվ հետագայում ես հանիցս համոզվեցի այդ ասույթի ճշմարտացիությանը:

1990 թ. սեպտեմբերի 9-ին Մոսկվայում ես հաղթական հացադուլ հայտարարեցի, բողոքելով Գորբաչովի կողմից Ղարաբաղի օրինական իշխանության լուծարման դեմ: Հինգ օր հետո իմ հյուրանոցային համարում հայտնվեց Վիկտոր Համբարձումյանը: Որքան մեծ եղավ իմ զարմանքը, երբ 82-ամյա գիտնականը ցանկություն հայտնեց միանալ պայքարի այդ ծայրահեղ ձեւին: Մենք նույնիսկ չհասցրինք խոսել մանրամասնությունների մասին: Նա լոկ ասաց, թե շուտով կվերադառնա: Եվ մեկ ժամ անց վերադարձավ:

Ես գիտակցում էի, թե մեր ժողովրդի, եւ ոչ միայն նրա, առջեւ ինչպիսի պատասխանատվություն էի ստանձնում, համաձայնելով համայն մարդկության սեփականությունը հանդիսացող հանճարեղ գիտնականի վտանգավոր հետեւանքներով հղի առաջարկությանը: Չէ՞ որ հայտարարված էր քաղաքական անժամկետ հացադուլ, եւ գիտնականին հայտնի էր: Դա գիտեին նաեւ մեր գինակիցներ Սոս Սարգսյանը, Վալիկ Գրիգորյանը եւ Սեմյոն Բաբայանը: (Աստված գիտե, թե այդ ամենն ինչով կավարտվեր, եթե չլիներ Ամենայն հայոց կաթողիկոս Վազգեն Առաջինի հիրալի սրտը, որն անօրինական կերպով հեռացվել է Հայաստանից»: Իհարկե, կարելի էր խմբագրել, խուսափելով նույն նախադասության մեջ «որը» բառի կրկնությունից: Բայց, Աստված վկա, ձեռս չէր բարձրանում հանճարի ոճին դիպչելու:

Ինձ համար գլխավորն այն էր, որ մեկ-երկու օր հետո այդ միտքը բարձրաձայն արտահայտելու է ինքը՝ Վիկտոր Համբարձումյանը եւ դա անելու է համագումարների պալատում, որի դահլիճում բանախոսին լսելու են ոչ միայն ԽՍՀՄ բոլոր ժողովրդական պատգամավորները, այլեւ հազարավոր հյուրեր: Ելույթները ուղիղ եթերում հեռարձակվում էին ամբողջ Խորհրդային Միությունում եւ «Ինտերվիդենիեի» ալիքներով: Հիշում եմ, Վիկտոր Համբարձումյանը ժպտալով ասաց. «Նախագահողը ինձ ձայն կտա, կնշի իմ անունը, եւ մինչ ես կմոտենամ ամբիոնին, ներկաները կծափահարեն: Բայց երբ ավարտեմ ելույթս, արդեն կլսվեն հատուկենտ ծափահարություններ: Ես միշտ էլ վատ եմ ելույթ ունենում, ինձ չի հաջողվում հստակորեն վերջնամասը: Ես առհասարակ թլվատ եմ...»: Ես ընդհատեցի, ասելով, թե. «Սախարովը նույնպես թլվատ է, բայց կարգին բաներ է ասում: Հիմա մի օրինակ կբերեմ, եւ Դուք կհամոզվեք, որ իսկական հրապարակախոս եք»: Ես բարձրաձայն կարդացի նրա ելույթի հատվածներից մեկը. «Ղեկավարությունը եւ իշխանության ապարատները ստեղծված են ժողովրդին ծառայելու համար: Դա նրանց սրբազան պարտականությունն է: Իսկ պարտականությունների հաջող կատարման համար դրանք պետք է հստակորեն սահմանված լինեն: Պարտականությունների եւ դերերի հստակ ու ստույգ բաշխումը բացարձակապես անհրաժեշտ է...»: Եվ ավելացրի. «Ախր սա իսկական հրապարակախոսություն է»:

Երկու օր անց այդ եւ մյուս պարբերությունները հնչեցին համագումարի ամբիոնից, ներկաներին ապշեցնելով այն ժամանակների առումով իրենց թարմ եւ անսպասելի մտքերով: Միայն ակադեմիկոս Համբարձումյանը կարող էր պաշտպանել «չինովնիկին»: «Ի դեպ, չգիտես ինչու մեզ մոտ «չինովնիկը» վատ բառ է համարվում: Ոչ, չինովնիկը նախեւառաջ մարդ է, որը կատարում է իրեն հանձնարարված միանգամայն որոշակի պարտականությունները»:

Խոսելով պարտականությունների մասին, բանախոսը սահուն կերպով անցավ իրավունքների թեմային, այն լուսաբանելով ժամանակի ամենահրատապ օրինակով. «Եթե խորամուխ լինենք Ղարաբաղի հարցին, ապա վեճի պատճառը պարզ կդառնա: Հայ ժողովրդի գիտակցության մեջ 20-ական թվականներին Հայաստանի կազմից Ղարաբաղի անօրինական, հակասահմանադրական դուրսբերումը նույնպես բխում էր «գլխավորը իրավունքի բռնատիրումն է» սկզբունքից: Այսինքն տարածքի նկատմամբ իրավունք ձեռք բերելով, սկսել այդ տարածքի հայաթափումը: Իսկ երբ հայաթափումը կավարտվի, ինչպես արդեն արվել է Նախիջեւանում, թող հետո ասեն ինչ ուզում են: Միեւնույն է, գործն արդեն արված կլինի»:

Ողջունելով Աֆղանստանից զորքերի դուրսբերումը, մեծ գիտնականը ներկաների բուռն ծափահարությունների ներքո խոսում էր ոչ միայն ամբողջ Խորհրդային Միության, այլեւ առանձին ժողովուրդների շահերի մասին: Կրկին բերեց իր ճշգրտությամբ ու հստակությամբ եզակի հետեւյալ օրինակը. «Երբ նախկին արտգործնախարար Սոլոդովը ժամանակին հայտարարեց, թե հայ ժողովուրդը հրաժարվում է Կարսի մարզը եւ 1915 թ. ցեղասպանության (որը լավ հայտնի է ամբողջ աշխարհին) տարածը ես ստանալու հավակնություններից, նա սխալ էր: Նա անգթորեն ոտնահարում էր Խորհրդային Միության ժողովուրդներից մեկի զգացմունքներն ու շահերը»:

Կողքս նստած Արկադի Վոլսկին Համբարձումյանի ելույթից անմիջապես հետո թեթեւակի իմ կողմը թեքվելով, ցածրաձայն ասաց. «Սա ոչ թե մեծ գիտնականի, այլ մեծ պատմաբանի, պետականագետի եւ հրապարակախոսի ելույթ է»: Ես պատասխանեցի Անտիկ աշխարհում հայտնի ձեւակերպմամբ. «Մեծ մարդը մեծ է ամեն ինչում»: Եվ հետագայում ես հանիցս համոզվեցի այդ ասույթի ճշմարտացիությանը:

1990 թ. սեպտեմբերի 9-ին Մոսկվայում ես հաղթական հացադուլ հայտարարեցի, բողոքելով Գորբաչովի կողմից Ղարաբաղի օրինական իշխանության լուծարման դեմ: Հինգ օր հետո իմ հյուրանոցային համարում հայտնվեց Վիկտոր Համբարձումյանը: Որքան մեծ եղավ իմ զարմանքը, երբ 82-ամյա գիտնականը ցանկություն հայտնեց միանալ պայքարի այդ ծայրահեղ ձեւին: Մենք նույնիսկ չհասցրինք խոսել մանրամասնությունների մասին: Նա լոկ ասաց, թե շուտով կվերադառնա: Եվ մեկ ժամ անց վերադարձավ:

Ես գիտակցում էի, թե մեր ժողովրդի, եւ ոչ միայն նրա, առջեւ ինչպիսի պատասխանատվություն էի ստանձնում, համաձայնելով համայն մարդկության սեփականությունը հանդիսացող հանճարեղ գիտնականի վտանգավոր հետեւանքներով հղի առաջարկությանը: Չէ՞ որ հայտարարված էր քաղաքական անժամկետ հացադուլ, եւ գիտնականին հայտնի էր: Դա գիտեին նաեւ մեր գինակիցներ Սոս Սարգսյանը, Վալիկ Գրիգորյանը եւ Սեմյոն Բաբայանը: (Աստված գիտե, թե այդ ամենն ինչով կավարտվեր, եթե չլիներ Ամենայն հայոց կաթողիկոս Վազգեն Առաջինի հիրալի սրտը, որն ամեն ինչով կավարտվեր, եթե չլիներ Ամենայն հայոց կաթողիկոս Վազգեն Առաջինի հիրալի սրտը):

Եվ այդուհանդերձ, դժվար է գերագնահատել ակադեմիկոս Համբարձումյանի համամարդկային արժեքը, ընդսմին, հիշելով նրա պատկառելի տարիքը:

Սովորաբար ես վաղ եմ վեր կենում: Սակայն, որքան էլ վաղ էի արթնանում, միշտ տեսնում էի, որ Վիկտոր Համբարձումյանը պառկած կարդում է: Միայն մեկ անգամ՝ վերջին օրը, ավելի ճիշտ, իր համար վերջին առավոտյան հարեւանս քնած էր մնացել: Մինչեւ առավոտյան ժամը 3-4-ը զրուցել էինք: Տանջվում էինք անքնությունից: Քաղցը հիշեցնում էր իր մասին: Եվ այնուամենայնիվ մի տեսակ անտվոր էր առավոտյան նրան քնած տեսնելը: Ես մոտեցա նրան: Դեմքը դալուկ էր: Աչքերի տակ պարկիկներ էին գոյացել: Հիշեցի, թե նա ինչպիսի տիտանական աշխատանք էր կատարում լրագրողների բազմության հետ, հատկապես նախօրեին, երբ խումբ-խումբ մարդիկ էին գալիս (խոշոր գիտնականներ, գրողներ, դերասաններ, պատգամավորներ, Գորբաչովի պատվիրակներ, հարազատներ) շնորհավորելու ծննդյան տարեդարձի առթիվ: Շնչառությունը ընդհատում էր: Ուզում էի դաստակը բռնել երակազարկը հաշվելու համար, բայց վախեցա արթնացնել: Մեկ ժամ հետո եկավ բժիշկը, որն ամեն օր գնում էր ամենուր: Մի ամբողջ խումբ բժիշկներ հետեւում էին մեր առողջական վիճակին: Ամեն օր տեղեկագիր էին թողարկում: Ահա «Հացադուլի 11-րդ օրվա» (Վիկտոր Համբարձումյանի 6-րդ օրվա) գրառումը. «Առանձնակի տագնապ է հարուցում Ղարաբաղի բարդացած իրավիճակի առնչությամբ ակադեմիկոս Համբարձումյանի խոր մտահոգության հուզական ռեակցիայի լրջությունը: Հայտնվել են ուղեղի արյան շրջանառության վտանգավոր նշաններ, որոնք դժվարացնում են նրա տեղաշարժը, ուժերի հետագա անկում, կենսական տոնուսի նվազում, որոնք նրա տարիքում կարող են դառնալ անշրջելի եւ հանգեցնել ամենալուրջ հետեւանքների»:

Դա ինձ համար ամենածանր օրն էր քաղաքական հացադուլի երեք շաբաթների ընթացքում: Ինձ հոգեհարազատ մարդու կյանքի համար արտահայտված մտահոգությունը վերածում էր սրբի գիտակցման, որ մեր բաժանումն այլընտրանք չունի: Այլապես դժբախտությունն անխուսափելի կդառնար:

Ինձ բախտ վիճակվեց լինելու մեծ մարդու բարոյական սխրանքի ականատեսը, որը մի ամբողջ շաբաթ օր ու գիշեր, անտեսելով ծերունական հիվանդություններն ու անքնությունը, պատրաստ էր կյանքը զոհաբերել հանուն այն բանի, որ գոնե ինչ-որ չափով թեթեւանա ըմբոստ Ղարաբաղի ճակատագիրը: Հյուրանոցում տացվում էին հազարավոր հեռագրեր: Խոշորագույն գիտնականները, Նոբելյան մրցանակի դափնեկիրները, մեր հայրենակիցները մտահոգություն հայտնելով ակադեմիկոսի կյանքի համար, միեւնույն ժամանակ չէին կարողանում իրենց հիացմունքը թաքցնել նրա ձեռնարկած քայլի առթիվ: Նրանցից շատերը ԽՍՀՄ ղեկավարությանը նամակներ էին ուղարկում, պահանջելով անհապաղ վերականգնել Ղարաբաղի օրինական իշխանությունը, հանգի, ինչպես նրանք էին արտահայտվում, Վիկտոր Համբարձումյանի նման մարդը չէր կարող ծայրահեղ միջոցի դիմել, եթե վստահ չլիներ սեփական իրավացիությանը:

«Մոսկվա» հյուրանոցի մուտքի մոտ սպասում էր շտապօգնության մեքենան: Վիկտոր Համբարձումյանի որդին՝ Ռուբեն Համբարձումյանը, որն օգնում էր հագնելու մոխրագույն թիկնոցը, դնելու մուգ գույնի բերետը, ծաղկավոր շարֆը: Մեկնելուց անմիջապես առաջ Վիկտոր Համբարձումյանը մոտեցավ ինձ: Մենք գրկախառնվեցինք: Ես թաքցնում էի արցունքներս նրանից, նա էլ ինձնից: Նրան ցածրաձայն ասացի. «Շնորհակալություն, որ Դուք կամ, շնորհակալություն Ձեր դասերի համար»: Նա նույնպես ցածրաձայն պատասխանեց. «Ձեզ շնորհակալություն՝ Արցախի դասերի համար: Ես հեռանում եմ, որպեսզի Ձեզ չդավաճանեմ, հանգի, եթե դժբախտություն պատահի հենց այստեղ, Ձեր սենյակում, ապա այնպես կստացվի, թե ես իրոք դավաճանել եմ թե՛ Ձեզ եւ թե՛ մեր ընդհանուր գործին: Ես հիվանդանոցում կշարունակեմ պայքարը»:

Աստված ինձ շնորհեց համբարձումյանական ոգով ու հմայքով հագեցած վեց անկրկնելի օր ու գիշեր, առանց որոնց իմ կյանքը պակասավոր կլիներ:

ՋՈՐԻ ԲԱԼԱՍՅԱՆ

digitised by A.R.A.R.@

Միջազգային

ՏԱՐԱՇԱՐՅԱԼ

Իրան-«Թալիբան» պատերազմը գրեթե բացառվում է

Հնարավոր են սահմանափակ ռազմական գործողություններ

Սեպտեմբերի 14-ին Թեհրան տեղափոխվեցին թալիբների ձեռքով, Միջազգային կարմիր խաչի վկայությամբ, դաժանորեն սպանված իրանցի 6 դիվանագետների եւ Իրնա լրատվական գործակալության թղթակցի աճյունները: Ի դեպ, Մազարի Շարիֆում Իրանի հյուպատոսարանի երկու այլ աշխատակիցներ, որոնք փրկվել էին, սեպտեմբերի 16-ին ժամանեցին Թեհրան, որտեղ բազմամարդ ցույցեր էին տեղի ունենում ընդդեմ թալիբների: Սեպտեմբերի 15-ին Իրանի առաջնորդ, զինված ուժերի գլխավոր հրամանատար Այաթոլա Խամենեին երկրի զինված ուժերին մարտական պատրաստականության կոչ արեց, նշելով, որ դա անհրաժեշտության դեպքում արագ եւ վճռական գործողությունների դիմելու նպատակ է հետապնդում: Բացի այդ, Թեհրանը հայտարարել է, որ սեպտեմբերի վերջին երկրի արեւելյան հատվածում՝ Աֆղանստանին եւ Պակիստանին սահմանամերձ շրջաններում, զինված ուժերի 200 հազար եւ Հեղափոխության պահապան կորպուսի 70 հազար զինվորների մասնակցությամբ լայնամասշտաբ զինավարժություն է անցկացվելու: Վերջիններս այստեղ էին տեղափոխվել սեպտեմբերի սկզբին տեղի ունեցած զինավարժություններին մասնակցելու, որից հետո չհեռացան շրջանից: Նույն օրը՝ սեպտեմբերի 15-ին թալիբների առաջնորդ Մոհամեդ Օմարը պատասխանություն հայտնեց ՍՍԿ-ի ղեկավարությամբ Իրանի հետ բանակցելու: Անշուշտ, թալիբները նման քայլերով ձգտում են, թեկուզ անուղղակի, ճանաչվել միջազգային հանրության կողմից: Այսուհանդերձ, թալիբները զգալի զինուժ եւ ռազմական տեխնիկա են կուտակել սահմանամերձ շրջանում եւ հայտարարել, որ անհրաժեշտության դեպքում կհրթռակոծեն Իրանի քաղաքները:

Իրան-«Թալիբան» ռազմական բախումների սպառնալիքը մտել է միջազգային ՁԼՄ-ների եւ քաղաքական տարբեր շրջանակների օրակարգ: Սակայն, ինչպես նշել ենք («Ազգ», 10 սեպտեմբերի 1998 թ.), թալիբների դեմ լայնամասշտաբ հարձակողական գործողությունների դիմելը, եթե նման քայլերով շահագրգիռ ուժ սադրիչ գործողությամբ չհրահրի Իրանին, գրեթե բացառվում է: Նման հարձակման դեպքում ոչ միայն պատերազմի մեջ կներքաշվեն թալիբների անմիջական աջակիցները՝ Պակիստանն ու Սաուդյան Արաբիան, որոնք բնավ էլ հակված չեն դրան, այլեւ շրջանում եւ դրանից դուրս գտնվող այլ երկրներ, այդ թվում «Թալիբանի» ձեւավորման ակտիվ մասնակից ԱՄՆ-ն: Վերջինիս մասնակցությունը թալիբներին Աֆղանստանի ռազմական ասպարեզ բերելու հարցում հաճախ դայմանավորում են նաեւ Վաշինգտոնի «երկակի սանձահարման» քաղաքականությամբ, որը առնվազն հաջողությամբ չդասակվեց: Քաղաքականություն, որի նպատակը, ըստ Վաշինգտոնի, տնտեսական եւ քաղաքական ճնշումների միջոցով Իրանում իշխող վարչակարգին դեպի չափավորականություն մղելն էր: Տնտեսական ոլորտում Իրանի դեմ ԱՄՆ-ն կիրառեց բազմաթիվ պատժամիջոցներ: Քաղաքական ասպարեզում ԱՄՆ-ն ջանքեր է գործադրում շրջափակել Իրանը առնվազն ոչ բարեկամական երկրներով: Եվ ահա ստեղծվեց թուրք-իսրայելական ռազմավարական դաշինքը, հարավում մերթընդմերթ բռնկվում են Իրան-Արաբական Միացյալ Էմիրություններ եւ Իրան-Բահրեյն տարածայնությունները, արեւմուտքում՝ բնամաքար տրամադրված Իրաքը, ուստի Աֆղանստանում հակաիրանական կողմնորոշման թալիբների իշխանության հաստատումը տնտեսական նկատառումներից զատ նաեւ կհամալրեր Իրանի շրջափակումը: Սակայն թե ինչու Վաշինգտոնը շահագրգիռ էր թալիբների իշխանության հաստատմամբ եւ եթե վերջիններիս վարած ներքին քաղաքականությունը, որտեղ մարդու իրավունքների ոտնահարման աղաղակող փաստեր են արձանագրվում, չխանգարեր, անշուշտ, Վաշինգտոնը միանալով Իսլամաբադին եւ էր Ռիադին Աֆղանստանի օրինական իշխանություն կճանաչեր թալիբներին: Սակայն, վերջերս, երբ հայտնի դարձավ, որ Սաուդյան Արաբիայի նախկին քաղաքացի, միլիարդատեր իսլամ-արմատական Ուսամե Բեն Լադանը, որը ապաստան է գտել թալիբների մոտ, վայելելով նրանց հովանավորությունը, մասնակցել է վերջերս Աֆրիկայում ԱՄՆ դեսպանությունների դեմ կատարված ահաբեկչություններին, այս եւ մի շարք այլ հանգամանքների բերումով, թվում է, թե Վաշինգտոնը ավելի շուտ հակված է հրաժարվելու թալիբներին աջակցելուց, քան ճանաչել նրանց իշխանությունը:

Ուստի, այժմ հաշվի առնելով, որ Վաշինգտոնը ձգտում է նոր քաղաքականություն կիրառել Թեհրանի նկատմամբ եւ քայլ է կատարում ԱՄՆ-Իրանի փոխհարաբերությունների բնականոնացման ուղղությամբ, կարելի է ենթադրել, որ եթե Սպիտակ տանը հաջողվի առաջընթաց արձանագրել այս ոլորտում, ինչին խիստ դեմ է Կոնգրեսը, ապա Իրան-Աֆղանստան փոխհարաբերությունների հարցը մեծամասամբ կլուծվի: Այլապես Թեհրանը հարկադրված լրացուցիչ ջանքեր պետք է գործադրի Աֆղանստան հետ 850 կմ երկարությամբ սահմանագծի անվտանգությունն ապահովելու նպատակով: Թեեւ, ինչպես նշել ենք («Ազգ», 13 օգոստոսի 1998 թ.), թալիբների իշխանության հաստատումը ոչ միայն դեռ չի նշանակում Աֆղանստանի հարցի լուծում, այլեւ թեւակոխելու է նոր, ավելի բարդ փուլ: Ինչ վերաբերում է Իրանի առաջիկա զորավարժություններին եւ զինված ուժերի մարտական պատրաստականությանը, ապա ամենայն հավանականությամբ թալիբների վրա ճնշումը մեծացնելու նպատակ է հետապնդում: Թեեւ Իրանի իշխանության պահպանողական թեւի շրջանակներում կան ուժեր, որոնք կողմնակից են լայնածավալ ռազմական գործողությունների, սակայն դրանց թիվը շատ փոքր է: Այսուհանդերձ, Իրանը թերեւս իրեն իրավունք վերապահի անհրաժեշտության դեպքում դիմել սահմանափակ ռազմական գործողությունների, ինչպես օրինակ՝ ԱՄՆ-ի կողմից Բեն Լադանի ճամբարների ռմբակոծությունն էր Աֆղանստանում:

ԷՄՄԱ ԲԵԳԻՋԱՆՅԱՆ



ՌՈՅԵՐ-ՍՊՈՒՆԿ

Հնդկաստանը պատրաստ չէ ստորագրելու միջուկային փորձարկումների արգելման պայմանագիրը

ԴԵԼԻ, 17 ՍԵՊՏԵՄԲԵՐ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: «Հնդկաստանը պատրաստ չէ ստորագրելու միջուկային փորձարկումների համապարփակ արգելման պայմանագիրը նույնիսկ այն դեպքում, եթե այդ քայլին դիմի Պակիստանը»: Ըստ ԻՏԱՌ-ՏԱՍՍ-ի հաղորդման, այս հայտարարությամբ այսօր Չինաիում (Մադրաս) հանդես է եկել Հնդկաստանի վարչապետ Աթալ Բիհարի Վաջպային:

Անդրադառնալով Արեւմուտքի պատժամիջոցներին, որոնք Հնդկաստանի դեմ մտցվել էին նրա կողմից միջուկային պայթեցումների իրականացումից հետո, վարչապետը կրկնեցնելով բնութագրել է որպես «հակարդյունավետ»: «Մենք ունենք ամուր ազգային տնտեսություն, եւ այն կախված չէ օտարերկրյա օգնությունից: Այս բոլորը մեզ թույլ են տալիս դիմանալ դրսի ճնշմանը», նշել է Վաջպային:

Հնդկաստանի վարչապետի այս հայտարարության պատասխանն էր Պակիստանի արտգործնախարարի ելույթը, որը նույնպես մերժել է միջուկային փորձարկումների արգելման պայմանագիրն ստորագրելու հնարավորությունն այնքան ժամանակ, «քանի դեռ կգործեն Իսլամաբադի նկատմամբ մտցված միջազգային տնտեսական պատժամիջոցները»: «Բայց նույնիսկ այդ պայմանագրին միանալու դեպքում Պակիստանը կմնա միջուկային տերություն, եւ ոչ մի ճնշում մեզ չի պարտադրի հրաժարվել այդ կարգավիճակից», հաստատել է նախարարը:

ՀԱՄԱՌՈՏ

Քոֆի Անանը նախաձեռնում է հանդիպում Աֆղանստանի իրադրության

ՎԱՇԻՆԳՏՈՆ, 17 ՍԵՊՏԵՄԲԵՐ, ԱՐՄԵՆՊՐԵՍ-ԻՏԱՌ-ՏԱՍՍ: ՄԱԿ-ի գլխավոր քարտուղար Կոֆի Անանը մտադիր է եկող շաբաթ հատուկ հանդիպում անցկացնել Աֆղանստանի իրադրության շուրջ՝ ութ շահագրգիռ պետությունների մասնակցությամբ: Ինչպես հայտնել է ԱՄՆ-ի վարչակազմի պաշտոնական ներկայացուցիչը, նման հանդիպման անհրաժեշտությունը թելադրված է բուն Աֆղանստանի անկայուն իրադրությամբ, ինչպես նաեւ իրանա-աֆղանական սահմանում տարածվող առճակատմամբ, որը սպառնում է վերածել զինված հակամարտության: Նրա ասելով, հանդիպմանը հրավիրված են Տաջիկստանի, Ուզբեկստանի, Թուրքմենստանի, Իրանի, Պակիստանի եւ Չինաստանի ներկայացուցիչներ: Նրանց կմիանան նաեւ ԱՄՆ-ը եւ Ռուսաստանը:

Կոսովոյում ՆԱՏՕ-ի միջամտության հավանականությունը մեծանում է

ՎԱՇԻՆԳՏՈՆ, 17 ՍԵՊՏԵՄԲԵՐ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: Սերբական Կոսովոյի երկրամասում իրադրությունն «արտակարգ բնույթ» է ձեռք բերում, ինչը բարձրացնում է ՆԱՏՕ-ի ռազմական միջամտության հավանականությունը: Ըստ ԻՏԱՌ-ՏԱՍՍ-ի հաղորդման, այս մասին չորեքշաբթի օրը հայտարարել է ԱՄՆ-ի պետդեպարտամենտի ներկայացուցիչ Ջեյմս Ֆոլին: «Կոսովոյում հնարավոր ռազմական ներխուժման նպատակով ՆԱՏՕ-ի ռազմական նախապատրաստությունները որոշակի ուրվագծեր են ընդունել», ասել է նա: Ինչպես ընդգծել է Ֆոլին, ՆԱՏՕ-ի անդամների շրջանում աճում է վճռական գործողությունների անհրաժեշտության համոզմունքը, եթե Կոսովոյի իրավիճակը շարունակի վատանալ: «Բոլոր տարբերակները, ներառյալ օդային հարվածներ հասցնելը (սերբական ուժերին), բաց են մնում», ասել է նա:

«Ստանդարդ ընդ Փուրզ»-ը նվազեցրեց Ռուսաստանի վարկային ռեյտինգը

ՆՅՈՒ ՅՈՐՔ, 17 ՍԵՊՏԵՄԲԵՐ, ԱՐՄԵՆՊՐԵՍ-ԻՏԱՌ-ՏԱՍՍ: «Ստանդարդ ընդ Փուրզ» միջազգային վարկանիշային գործակալությունը հայտարարել է արտարժույթի փոխառությունների գծով Ռուսաստանի երկարաժամկետ վարկանիշը «CCC»-ից մինչեւ «CCC-մինուս» նվազեցնելու որոշման մասին: Կարճաժամկետ վարկանիշը պահպանվել է «C»-ի մակարդակում: Ընդհանուր ռեյտինգային կանխորոշումը մնում է բացասական: Բացատրելով այս քայլը, «Ստանդարդ ընդ Փուրզն» ընդգծել է, թե ելնում է այն հանգամանքից, որ Ռուսաստանի նոր կառավարությունը սահմանափակ հնարավորություններ ունի երկրի էկոնոմիկայի կայունացման եւ 1998 թվականի վերջին ու 1999 թվականին մարման ժամկետով պարտքի պարտավորությունների սպասարկման համար:

Բաժնետոմսերի փոխարժեքի նոր անկում Տոկիոյի ֆոնդային սակարանում

ՏՈԿԻՈ, 17 ՍԵՊՏԵՄԲԵՐ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: Տոկիոյի ֆոնդային սակարանում այսօր գրանցվել է բաժնետոմսերի փոխարժեքի նոր կտրուկ անկում: Ըստ ԻՏԱՌ-ՏԱՍՍ-ի հաղորդման, Նիկեյի համաթիվը, որն արտացոլում է երկրի 225 առաջատար ընկերությունների արժեթղթերի միագումար գնանշումները, դարձյալ ցած է իջել 14 հազար իենի հոգեբանորեն կարեւոր նշագծից, կեսօրին մոտ կազմելով 13867,13 իեն: Չորեքշաբթի օրը սակարանը փակելիս այն կազմում էր 14041,51 իեն: Ճապոնիայի ֆոնդային շուկայում իրադրության ներկայիս վատթարացումը փորձագետները կապում են այն պարագայի հետ, որ ներդրողները չեն հավատում կառավարող լիբերալ-ժողովրդավարական կուսակցության ընդունակությանը շատ կարգով արդյունավետ միջոցներ ձեռնարկելու «վատ վարկերի» հիմնախնդրի լուծման եւ երկրի էկոնոմիկայի ընդհանուր առողջացման համար: Ընդդիմության կողմից ուժեղ դիմադրության պատճառով նրան մինչեւ օրս չի հաջողվում խորհրդարանում անցկացնել համապատասխան օրինագծերի փաթեթը:

ՌԵՊՈՐԻՏԱԺ

Ռուսները պահանջում են վճարել իրենց մարդասիրական օգնություն բերելու համար

«Ազգի» երեկվա համարում զետեղված տեղեկատվությունը հայտնում էր, որ Ռուսաստանի բնակչության 147 միլիոնից 31-ը ապրում է թշվառության սահմանագծից ներքեւ եւ հատկապես այս խավի համար առաջիկա ձմեռը կարող է սարսափելի լինել: Ողջ աշխարհի աչքի առաջ շտապափելիորեն ուրվագծվում է սովի ոսկրոտ ձեռքը, որն արդեն չեն թաքցնում նաեւ մոսկովյան լրատվամիջոցները, մասնավորապես՝ ՕՐՏ հեռուստաընկերությունը: Երկու օր առաջ Դումայի «ձախ» մեծամասնության կատաղի ատելությանն արժանացած հեռուստալրագրող Դորենկոն իր վարած «Ժամանակ» ծրագրով տեղեկացնում էր, որ Լիսվան մոտ 1 մլն դոլարի մարդասիրական օգնություն է հատկացրել իր սահմանակից եւ Ռուսաստանի համար անկլավային Կալինինգրադի մարզին՝ հիմնականում դեղորայք եւ սննդամթերք մսուրմանկապարտեզների, ծերանոցների ու դպրոցների համար, ուր արդեն իսկ նկատվում են սովից աշակերտների ուշագնացության դեպքեր: Շնորհակալությամբ տեղեկացնելով, որ լիտվացիների առաքած օգնության առաջին մասը, 100 հազար դոլարի դեղորայքը, արդեն իսկ հասել է մարզի հիվանդանոցներ, Դորենկոն անմիջապես հեռուստադիտողին հրամցրեց այլ սյուժե Ռուսաստանի հյուսիսային հարեւան Ֆինլանդիան նույնպես, անհանգստացած սահմանակից մարզերի ռուս բնակչությանը սպառնացող ձմեռային վտանգներից, 6 խոշոր բեռնատարներով 1,1 մլն դոլարի մարդասիրական օգնություն է առաքել, հիմնականում՝ տաք հագուստ: Ռուսական մամուլային ծառայություններն իրենց երկրին ձրի ուղարկված օգնության այդ բեռների դիմաց պահանջել են... մամուտուրմ վճարել, եւ երբ ֆիններն զարմանից թոթվել են ուսերը՝ բեռնատարները վերադարձվել են: Այժմ այդ ավտոմեքենաները դեռ կանգնած են ռուս-ֆիննական սահմանում, եւ մարդասիրական օգնություն տրամադրողները առայժմ անոթուղ ջանքեր են գործադրում հասկացնելու ում հարկն է, որ իրենք առեւտրային շահ չեն հետապնդում: Ասբուդի թատրոն չէ, ի՞նչ է, որ շատ է հիշեցնում Չեկ Լոնդոնի մի շարք պատմվածքներից հայտնի այն սեւամորթ վայրենիներին, որոնք սպիտակ բժիշկներից պահանջում էին տուգանք վճարել՝ իրենց խմած դեղերի դիմաց, ինչի շնորհիվ փրկվել էին համաճարակներից եւ սուլյգ մահից:

Արդյոք այս կարգի «անհաճո» տեղեկատվության եթեր թափանցելը կանխարգելելու համար չե՞ն ռուսական «ձախերը» Պրիմակովի վարչապետ նշանակվելուց անմիջապես հետո կատաղի պայքար սկսել ՕՐՏ հեռուստաընկերությունն ազգայնացնելու համար, որը պահելու հնարավորություն, ինչպես սեպտեմբերի 17-ին հավաստում էր նախկին վարչապետ Վիկտոր Չեռնոմիրդինը, պետբյուջեն չունի:

ՌԱՖԻԿ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

digitised by A.R.A.R.@

ԱԶԳ

Մշակույթ

Այս ֆիլմը դիտել եմ ոչ պատահաբար: Ոչ էլ պատահաբար եմ հայտնվել հեռուստէկրանի առջեւ: Ծրագրերի ազդագրից նախօրոք գիտեի: Եվ քանի որ լավ էի ճանաչում ֆիլմի բեմադրիչին, ուստի նստեցի արդեն որոշակի սպասելիքներով: Հորդորեցի նաեւ երեխաներիս՝ նայել այս ֆիլմը, ու չսխալվեցի...

Վաղուց այսպիսի բավականությամբ, հետաքրքրությամբ ու լարվածությամբ չէի դիտել հայկական որեմից անմասչելի ժայռաբլրի վրա: 1149 թվականից եղել է Ռուբինյանների աթոռանիստը: Սիսը Կիլիկյան Հայաստանի մայրաքաղաք հռչակվելուց հետո (1173 թ.) Անարզաբան կորցնում է իր ուժն ու նշանակությունը, իսկ թագավորության անկումից հետո ասիճանաբար ավերվում: Սակայն այստեղ ոտք են դրել ու իրենց գիտելիքները խորացրել ժամանակի առաջավոր պետական գործիչներ ու մտավորականներ Ներսես Շնորհալին, Ներսես Լամբրոնացին, Սմբատ Սպարապետը եւ շատ ուրիշներ: Լուսավորության գործը նրանք դիտել են որպես երկրի առաջադիմության կարեւոր գործոն: Բացվել են բազմաթիվ դպրոցներ բնակավայրերում ու վանքերում: Կրթությունը եղել է ծրի: Նշենք արժանահիշատակ Սմբատ Սպարապետի աշխարհիկ հայերենով կազմված «Դատաստանագիրքը», որի 71-րդ հոդվածը պարզ ասում էր. «Կու հրամայէ աւրենքս, որ բնաւ վարդապետ վարձ չառնու վասն գրոց կարդալոյ կամ գիտութեան եկեղեցւոյ ուսմանց, իսկի չէ պատեհ վարձ առնուլ եւ առա ուսուցանել: Առա կու հրամայէ (աւրենքս) զորբերեն եւ զաղքատն սաածել եւ խնամել եւ անուշացնել ի գործ, որ շատ դիմեն ու գան ի յուսումն»:

Իսկ այսօր Անարզաբա ամրոցի ավերակների մեջ պսակադրություն է... Տեղը-տեղին՝ թագով, պսակով, վկաներով մի նախանձելի պսակադրություն: Եվ պսակադրողն էլ ոչ այլ ոք, ինքը՝ Մեսրոպ արքեպիսկոպոս Աշջյանն է, որը նաեւ ամբողջ ուխտագնացության առաջնորդն է եւ հավանաբար այս ծրագրի ու ֆիլմի գաղափարի նախաձեռնողը:

Մեսրոպ արքեպիսկոպոս Աշջյան... Մի չափազանց համակրելի անձնավորություն: Նրա ադրումները, մտքերն ու հույզերը ճառագում են էկրանից ու համակում մեզ... Մոր ծննդավայր Հավավ գյուղի աղբյուրի մոտ թվում է, թե տաքից զովացնում է իրեն, այնինչ արցունքներն է լվանում... Եփրատին խոնարհված խաչակնքում է գետի ջուրը... Մեծ զոհերի այդ լուռ վկան: Տեսնես մեր արյան բաղադրությունից որքան է մնացել նրա անտարբեր հոսանքում...

...Ահա եւ Կարսը: Ինչպես Մեսրոպ սրբազանի համար Հավավ գյուղում էր կարեւոր նշանակության պահը, այնպես էլ հանդիսատեսիս համար եկավ կարեւոր նշանակության պահը:

Ահա Կարսի բերդը, ահա եւ Սուրբ Առաքելոց եկեղեցին, հեռվից միջին պլանով, այնուհետեւ մոտիկից...

«Հողը չի մոռանում իր տիրոջը, հողը սպասում է նրան...»

«Ով հայոց աշխարհ» հեռուստաֆիլմի պրեմիերայի առիթով



ւէ կինոնյութ, հատկապես վավերագրական հենքի վրա: Ու թեեւ հեղինակները ֆիլմն անվանել են «Թերթեր ուխտավորի օրագրից», սակայն սա շատ փչ է ու շատ համեստ. ֆիլմը պարզապես ցնցող տեսաշար է հաղված հայոց պատմության չխամրող էջերից: Սա մի կենդանի դասագիրք է, վաղուց սպասվող ու կարիքը խիստ զգացվող դասագիրք-տեսաֆիլմ, որը պետք է իր տեղը գտնի «Հայոց պատմություն» դասագրքի կողքին:

Ուխտագնացությունը սկսվում է հայոց կաթողիկոսների նստավայր Հռոմկլայի ավերակներից: Բերդաքաղաք՝ շրջապատված դժվարամատչելի ժայռերով եւ երեք կողմից ողողված Եփրատի ու Փարզմանի ջրերով: Հայտնի է, որ 1151 թ. Հայոց կաթողիկոս Գրիգոր Գ Պահլավունին բերդաքաղաքը գնել է Եդեսայի դուքս Ջոսլինի այրուց՝ Բեատրիսայից, եւ որ վերակառուցել, հիմնել է երկու եկեղեցի: Այնուհետեւ կաթողիկոսական աթոռը Ծովքից տեղափոխել է Հռոմկլա: Եվ որպես այդպիսին եղել է մինչեւ 1292 թվականը:

Ուխտավորներն այնուհետեւ իջնում են դեպի Միջերկրական ծով: Ահա Մուսա լեռան միակ հայաբնակ Յողուն-Օլուք գյուղը, ահա եւ Սուրբ լեռը, իր հեռավոր, մշուշոտ տեսքով, սակայն երբեք հայի կյանքից ու մտքից չջնջվող պատկերով...

Հետո... Հետո ցուցադրվում է անակնկալ...

Կիլիկիայի մայրաքաղաք Սիսից ընդամենը 25 կմ է հեռու Անարզաբա ամրոցը, կառուցված երեք կողմից անմատչելի ժայռաբլրի վրա: 1149 թվականից եղել է Ռուբինյանների աթոռանիստը: Սիսը Կիլիկյան Հայաստանի մայրաքաղաք հռչակվելուց հետո (1173 թ.) Անարզաբան կորցնում է իր ուժն ու նշանակությունը, իսկ թագավորության անկումից հետո ասիճանաբար ավերվում: Սակայն այստեղ ոտք են դրել ու իրենց գիտելիքները խորացրել ժամանակի առաջավոր պետական գործիչներ ու մտավորականներ Ներսես Շնորհալին, Ներսես Լամբրոնացին, Սմբատ Սպարապետը եւ շատ ուրիշներ: Լուսավորության գործը նրանք դիտել են որպես երկրի առաջադիմության կարեւոր գործոն: Բացվել են բազմաթիվ դպրոցներ բնակավայրերում ու վանքերում: Կրթությունը եղել է ծրի: Նշենք արժանահիշատակ Սմբատ Սպարապետի աշխարհիկ հայերենով կազմված «Դատաստանագիրքը», որի 71-րդ հոդվածը պարզ ասում էր. «Կու հրամայէ աւրենքս, որ բնաւ վարդապետ վարձ չառնու վասն գրոց կարդալոյ կամ գիտութեան եկեղեցւոյ ուսմանց, իսկի չէ պատեհ վարձ առնուլ եւ առա ուսուցանել: Առա կու հրամայէ (աւրենքս) զորբերեն եւ զաղքատն սաածել եւ խնամել եւ անուշացնել ի գործ, որ շատ դիմեն ու գան ի յուսումն»:

Իսկ այսօր Անարզաբա ամրոցի ավերակների մեջ պսակադրություն է... Տեղը-տեղին՝ թագով, պսակով, վկաներով մի նախանձելի պսակադրություն: Եվ պսակադրողն էլ ոչ այլ ոք, ինքը՝ Մեսրոպ արքեպիսկոպոս Աշջյանն է, որը նաեւ ամբողջ ուխտագնացության առաջնորդն է եւ հավանաբար այս ծրագրի ու ֆիլմի գաղափարի նախաձեռնողը:

Մեսրոպ արքեպիսկոպոս Աշջյան... Մի չափազանց համակրելի անձնավորություն: Նրա ադրումները, մտքերն ու հույզերը ճառագում են էկրանից ու համակում մեզ... Մոր ծննդավայր Հավավ գյուղի աղբյուրի մոտ թվում է, թե տաքից զովացնում է իրեն, այնինչ արցունքներն է լվանում... Եփրատին խոնարհված խաչակնքում է գետի ջուրը... Մեծ զոհերի այդ լուռ վկան: Տեսնես մեր արյան բաղադրությունից որքան է մնացել նրա անտարբեր հոսանքում...

Ջարդված, երկաթակոփ ճաղերի արանքից մի կերպ ներս է մտնում Մեսրոպ սրբազանը: Ներսը՝ ամայի, խորհրդավոր, անմխիթար... Հետո պատուհանի ճաղերի եւեւում Սրբազանը երկար է կանգնում, նայում մեզ՝ ջարդված ժպիտով, խոհերի հետ, մտքերի մեջ...

Հրաշք լիներ ու ես էլ հայտնվեի ճաղերից այն կողմ՝ նրա կողքին...

Բայց ես սպասում եմ, որ հիմա դուրս կգա Սրբազանը եւ ստեղծագործական խումբը կերջի վանքի շուրջբոլորը, վանքի հենց թիկունքում կտեսնի երկհարկանի սպիտակ մի տուն, որի փայտյա զարդանախշ երկարաշար բազրիքները անցյալման ուշադրություն կգրավեն եւ կնկարահանվեն...

Այդ տնից դարասկզբին ամեն օր եկեղեցի է գնացել-եկել Գարեգին քահանա Դուրգարյանցը եւ որ վանքից ստիպված հեռացել է միայն 1918-ին: Այդ տանը պարզապես ծնվել էր մայրս, եւ որ ես էլ պարզապես Գարեգին քահանայի ծոռն եմ... Ու կուզենայի ապուպապերիս տունը ցույց տալ երեխաներիս: Ավա՜ղ...

Չգիտե ում-ինչպես, բայց (լուրջ ասեմ, թե կատակով) բեմադրիչ Հովիկ Հախվերդյանին այս բանը ես չեմ ներելու...

Եվ սակայն, ուզում եմ տրանց սեղմել ստեղծագործական խմբի յուրաքանչյուր անդամի ձեռքը, շնորհավորել եւ հայտնել իմ շնորհակալությունը:

Ես կանգ չառա այլ տեսարանների ու վայրերի վրա (Մշո դաշտ, Սիսի դուռ, Վան, Ախթամար) որոնք նույնպես արված են հետաքրքիր, ճաշակով, արտահայտչական հնարանքներով: Ի դեպ, ֆիլմի պատմողական արտահայտչամիջոցները՝ Մեսրոպ Սրբազանի մեկնաբանությունները, Հրանտ Մարգարյանի պատմածները, Սոս Սարգսյանի ընթերցածները համալրում, իմաստավորում, խորացնում են տեսաշարային հուզական եւ ճանաչողական հենքը:

Ուզում եմ նշել նաեւ, որ ստեղծագործական խմբի ամենամեծ հնարանքը, սակայն, ժամերգության տեսարաններն էին Անիի Մայր տաճարի ավերակների մեջ: Այստեղ երիցս հաստատվեց Մուշեղ Գալշոյանի արդեն ֆիլմում հնչած այն միտքը, թե. «Հողը չի մոռանում տիրոջը, հողը սպասում է նրան»:

ՍԵՐԳԵՅ ԳԱԼՍՏՅԱՆ

ԵՐԵՎԱՆ

Մեպտեմբերի 21-ի տոնական հանդիսությունները

ԵՐԵՎԱՆ, 17 ՍԵՊՏԵՄԲԵՐ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: Երեւանի քաղաքապետարանում ասացին, որ Հայաստանի Հանրապետության անկախության 7-րդ տարելիցի տոնակատարության մեկնարկը կտրվի սեպտեմբերի 21-ին, ժամը 12-ին Հանրապետության հրապարակում՝ ՆԳ եւ ԱԱ նախարարության ներքին զորքերի փողային նվագախմբի ելույթով: Համերգային ծրագիրը ներկայացնելուց հետո, նվագախումբը տոնական երթով Ամիրյան փողոցով կշարժվի դեպի Գլխավոր մայրուղու՝ Սարյան փողոցին եւ Մաշտոցի պողոտային հարող տարածք, որտեղ՝ քաղաքապետարանի մանկապատանեական ստեղծագործության կենտրոնի փողային նվագախմբի, «Կովկաս», «Գարուն» ժողովրդական պարի անսամբլների, «Հրաշք», «Փոքրիկ աստղեր», «Էլենը եւ երեխաները» մանկական խմբերի, «Ափյուռք» բատրոն-ստուդիայի, «Պոպուլյար» ռոք խմբի եւ բեմի այլ վարպետների մասնակցությամբ կտրվի համերգ:

Տոնահանդեսը ժամը 15-ին կշարունակվի Խ. Աբովյանի անվան մանկական զբոսայգում: Հանդիսություններ են նախատեսվում նաեւ Կիրովի անվան մանկական եւ «Հաղթանակ» մշակույթի եւ հանգստի զբոսայգիներում, իսկ ժամը 17-ին՝ Օղակաձեւ զբոսայգու վերջերոդ հատվածում, «Առագաստ» սրճարանի մոտ:

Տոնական հանդիսությունները կեզրափակվեն Ազատության հրապարակում՝ ժամը 21-24-ը քաղաքապետարանի եւ պետական հեռուստատեսության համատեղ կազմակերպած համերգով:

Ժամը 21-ին «Հաղթանակ» զբոսայգում կտրվի հրավառություն:

ՍՅՈՒՅՆԻ ԳՐԱԴԱՐԱՆ

Ցուցահանդես՝ նվիրված Գեւորգ Հայրյանի 85-ամյակին

Կյանքի երկար ճանապարհ անցած 85-ամյա ծերունազարդ գրող եւ գրականագետ, հասարակական-քաղաքական գործիչ Գեւորգ Հայրյանն այն տարիքում է, երբ իրավունք ունի ասելու հանրահայտ իմաստուն խոսքը. «Մազերիս՝ արծաթ, շուրթերիս՝ ոսկի»:

Ավագագույն գրողի եւ գրականագետի հարուստ վաստակի գնահատմանն է նվիրված Հայաստանի Ազգային գրադարանում օրերս բացված ընդարձակ պատկերազարդ գրքային ցուցահանդեսը: Երիտասարդ Գ. Հայրյանը գրական աշխարհ մուտք գործեց իբրեւ բանաստեղծ («Վերելքի երգեր», 1932, «Լիություն», 1938, «Իմ երգը», 1946): Հետագայում նա հանդես եկավ արձակ երկերով: Դրանցից են՝ «Մեր տան ճանապարհին», «Չիթենու ծյուղը», «Արծվաքար» վեպերը, «Անվճար ազնվություն», «Խոհեր եւ փշեր» երգիծական մանրապատումների ժողովածուները:

Ցուցահանդեսում ներկայացված են նաեւ բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Հայրյանի՝ գրականությանն ու կինոյին նվիրված ուսումնասիրությունները, լրագրային հոդվածները:

Մեծ է հոբելյարի դերը գրական նշանավոր ու մնայուն երկերի, հատկապես Պ. Սեւակի «Անլռելի զանգակատուն», Հ. Շիրազի «Քնար Հայաստանի» եւ ուրիշ գրքերի հրատարակման, մի շարք կինոնկարների ստեղծման գործում:

Հայրյանի դերը մեր մշակութային կյանքում անգնահատելի է, որովհետեւ նրանի ժուռնալիստիկայի ամբիոնի վարիչը: Վարել է ՀԿԿ կենտկոմի գաղափարական աշխատանքի վարիչի, ՀՍՍՀ բարձրագույն եւ միջնակարգ մասնագիտական կրթության նախարարի, կինեմատոգրաֆիայի պետական կոմիտեի նախագահի, «Սովետական գրող» հրատարակչության տնօրենի պաշտոնները:

Ցուցահանդեսում ներկայացված են Դ. Դեմիրճյանի, Պ. Սեւակի, Հ. Սահյանի, Մ. Մկրյանի, Ս. Խանզադյանի եւ այլոց՝ Գ. Հայրյան մարդուն, գրողին ու գրականագետին տված բարձր կարծիքները:

Ցուցահանդեսը մեծ հետաքրքրությամբ դիտողները սիրով ունկնդրեցին գրադարանի տնօրեն Գ. Տեր-Վարդանյանի, «Արեւիկ» հրատարակչության տնօրեն Դ. Հովհաննեսի, Հայոց ցեղասպանության «Ուխտատուն» ինստիտուտ-թանգարանի տնօրեն Ա. Գրիգորյանի եւ հոբելյար Գ. Հայրյանի ելույթները:

ՀՐԱՉՅԱ ՀՈՒՆԱՆՅԱՆ

«ՀԱՅ-ԱՐՏ»

Արվեստում պետք է իշխի միտքը

երկու ամսից ավելի է, ինչ մայրաքաղաքի Մաշտոցի պողոտայում գտնվող Արդի արվեստի թանգարանի նախկին մասնաշենքում գործում է «Հայ-Արտ» (Հայաստան-արտերկիր) կենտրոնը, որտեղ այս ընթացքում տեղի է ունեցել չորս ցուցահանդեսի բացում: Վերջին ցուցահանդեսը՝ «Հայաստանի կալանավայրերը» խորագրով, ներկայացնում էր Մարտ Սիվամյանի 50 լուսանկարչական աշխատանքներ: Մարտ Սիվաստյանը 1992 թ. մինչեւ 1994 թ. կռվել է Ղարաբաղում եւ վիրավորվել: Նա Հայաստանի բանտարկյալների օգնության SPES ընկերության միջոցով եղել է Հայաստանի տարբեր կալանավայրերում եւ լուսանկարել դրվագներ կալանավորների կյանքից: Ի դեպ, լուսանկարները ցուցադրվել են նաեւ Ստեփանակերտում:

«Հայ-Արտ» մշակութային կենտրոնի տնօրեն Նորայր Այվազյանի հետ մեր զրույցը ոչ միայն նորաբաց կենտրոնի ու նրա խնդիրների, այլեւ ընդհանրապես մշակույթին վերաբերող հարցերի շուրջ էր:

«Հայ-Արտ» կենտրոնի ստեղծման նպատակը մշակութային ինտեգրացումն է: Պատահական չէ, որ առաջին ցուցահանդեսում ցուցադրվել է վերջին տասը տարիների 14 երկրների արվեստը: Մշակութային կենտրոնը շեշտը դնում է ժամանակակից արվեստի վրա: Եթե մենք շարունակ խոսում ենք տնտեսական, քաղաքական ինտեգրացիայի մասին, ապա պրն Այվազյանի կարծիքով, ինչո՞ւ չլինի նաեւ մշակութային ինտեգրացիա: Թող շարունակ ցուցահանդեսներ բացվեն ինչպես նկարիչների միությունում, ՆՔԱԿ-ում (Նորարար փորձառական արվեստի կենտրոն), այնպես էլ «Հայ-Արտում», որպեսզի պայմաններ ստեղծվեն մշակութային ազատ մտքի զարգացման համար: «Արվեստում արտահայտվելուն հաճախ խանգարում է զգացմունքային դաստիարակությունը, մինչդեռ նախապատվությունը պետք է տրվի փիլիսոփայական մտքի առկայությանը», նշեց պրն Այվազյանը:

Այսօր շատ է խոսվում ավանգարդիզմի, ավանգարդ արվեստի մասին: Հայտարարվում է, որ մեզ մոտ ավանգարդիզմը բարձր մակարդակի վրա է: Պրն Այվազյանի կարծիքով, Հայաստանում ասելիքի, շնորհքի իմաստով, զգացմունքային դրսեւորումներով ավանգարդ արվեստը դիտվում է եւ հասել է որոշակի մակարդակի, սակայն մտքի իմաստով դեռեւս ետ է մնում: Մինչդեռ ավանգարդ արվեստը հենց այն արվեստն է, որտեղ տաղանդն ու զգացմունքայնությունը պետք է իր տեղ ունենան մտքի համեմատ: Մշակույթը պետք է ձերբազատվի ավելորդ ինքնագովասանքից:

Ի դեպ, «Հայ-Արտ» կենտրոնում գործող վերջին ցուցահանդեսը Գյոթեի եւ Նարեկացու ակունքները փնտրելու, համամարդկային արժեքները զուգահեռաբար ներկայացնելու եւ համադրելու մի փորձ է: Եթե Հայաստանը գտնվում է Արեւելք-Արեւմուտք խաչմերուկում, ապա ցանկալի է հետեւել եւ իմանալ, թե ի՞նչ է կատարվում թե՛ Արեւելքում, թե՛ Արեւմուտքում, մշակույթը ո՞ր ուղղությամբ է զարգանում, մշակութային ի՞նչ փոխներգործություններ են տեղի ունենում, ի՞նչ ենք տալիս այլ մշակույթներին եւ ի՞նչ ենք վերցնում նրանցից, մեզ ինչպիսի՞ մշակույթ է պետք:

ԹԱԳՈՒՀԻ ՀՈՎՀԱՆՅԱՆ

digitised by A.R.A.R.@

ԱԶԳ

Մարզական

ՇԱԽՄԱՏ

Լեւոն Արոնյանը՝ Եվրոպայի չեմպիոն, Գաբրիել Սարգսյանը՝ մրցանակակիր

Աշխարհամասի մինչեւ 20 տարեկան պատանիների եւ աղջիկների առաջնության վերջին երկու տուրերը հայ շախմատիստների համար հաջող էին: Վերջին երկու պարտիաներում պարտություն կրեց ռուսաստանցի Ալեքսեյ Իլյուշինը, վերջինում՝ մյուս առաջատար Ալեքսանդր Մոսիյովը, իսկ Լեւոն Արոնյանը, տանելով երկու լիարժեք հաղթանակ, կարողացավ վերջին պահին շրջանցել նրանց: Ավելին՝ երրորդ տեղը եւս բաժին հասավ հայ շախմատիստին: 12-րդ տուրում հաղթելով Ումուս Ասակիսուն (Թուրքիա), Գաբրիել Սարգսյանը վերջին պարտիան ոչ-ոքի խաղաց Դավիթ Հարությունյանի (Վրաստան) հետ: Այդ արդյունքը նրան բոլոր տարբերակներում աղահովում էր երրորդ տեղը: Գաբրիելը հնարավոր հակառակորդներից ավելի բարձր լրացուցիչ ցուցանիշներ ուներ: Ի վերջո, նրան կարողացան հասնել հույն Քրիսթոս Բանիկասը եւ հոլանդացի Էրիկ վան դեր Դոյլը, որոնք նույն 8,5 միավորով գրավեցին չորրորդ եւ հինգերորդ տեղերը: Երկրորդը 9,5 միավորով Մոսիյովն է, իսկ Արոնյանի չեմպիոնական արդյունքը 10 միավոր է: Ի դեմ, 20 տարեկանների Եվրոպայի առաջնության հաղթողի կոչումը համարվում է գրոսմայստերական 1 նորմա կատարելուն հավասարազոր արդյունք:

Աղջիկների մրցաշարում երկրորդ տարին անընդմեջ Եվրոպայի չեմպիոնուհի հռչակվեց Սոփիո Թկեշելաշվիլին (Վրաստան): Տանելով երկու հաղթանակ՝ Ռուսուդան Գոլեթիանին (Վրաստան) նույնպես 9,5 միավոր ունեցավ, բայց լրացուցիչ ցուցանիշներով գրավեց միայն երկրորդ տեղը: Անգլուհի Իովանկա Հաուսկան վերջին պարտիան պարտվեց Էլինա Դանիելյանին եւ 8,5 միավորով գրավեց երրորդ տեղը: Մեր շախմատիստուհիներից լավագույն արդյունքը՝ 8 միավոր, ցույց տվեց Դանիելյանը, որը լեհուհի Կասարժինա Յուրկիեւիչի հետ բաժանեց 4-5-րդ տեղերը: Լիլիթ Մկրտչյանն ու Նելլի Աղինյանը 7,5-ական միավոր վաստակեցին, Նարինե Գասպարյանը՝ 7:

13 տուրերի արդյունքով Թկեշելաշվիլին ու Գոլեթիանին կատարեցին կանանց միջազգային գրոսմայստերի նորման, իսկ Հաուսկան, Մկրտչյանը եւ Յուրկիեւիչը՝ միջազգային վարպետի: Տղամարդկանց միջազգային վարպետի նորման կատարեց Գաբրիել Սարգսյանը: Եվրոպայի չեմպիոնները արդեն հայտնի շախմատիստներ են: Միջազգային վարպետ, 16-ամյա Լեւոն Արոնյանը ավելի փոքր հասակում դարձել է աշխարհի չեմպիոն, բազմիցս մրցանակային տեղեր գրավել Եվրոպայի տարբեր տարիքային խմբերի առաջնություններում, վերջերս Հայաստանի հավաքականի կազմում դարձել է Համաշխարհային մանկական օլիմպիադայի հաղթող: Վերջին ամիսների ընթացքում նրան մարզում է գրոսմայստեր Արշակ Պետրոսյանը:

Միջազգային վարպետ Սոփիո Թկեշելաշվիլին նույնպես բազմիցս հաջողությունների է հասել Եվրոպայի եւ աշխարհի աղջիկների առաջնություններում՝ սկսած դեռեւս 1991 թվականից: Վերջին շրջանում նրան մարզում էր գրոսմայստեր Լաշա Չանջոավան: 19-ամյա շախմատիստուհին Թբիլիսիի տեխնիկական համալսարանի երկրորդ կուրսի ուսանողուհի է եւ այդ իսկ պատճառով հիշ է զբաղվում շախմատով: Այս հաջողությունը նա համեստորեն բացատրեց հանգամանքների բերումով: Չնայած որ արդեն երկու գրոսմայստերական նորմա է կատարել, Սոփիոն ասաց, որ նա դեռ չի կողմնորոշվել շախմատի արհեստավարժ դառնալու հարցում:

Գաբրիել Սարգսյան

ԱՐՄԵՆ ՆԻԿՈՂՈՍՅԱՆ
Միջազգային կարգի մրցավար

Չեմպիոնների լիգայի մրցաշարի մեկնարկը

Եվրոպական երկրների Չեմպիոնների լիգայի մասնակից 24 թիմերը սկսեցին խմբային մրցումները: Առաջին խաղերում մի շարք անակնկալ արդյունքներ գրանցվեցին:

Առաջին եւ երկրորդ խմբերի բոլոր հանդիպումները ոչ-ոքի ավարտվեցին: Այստեղ ամենախոշոր անակնկալը իտալական սուպեր-ակումբ «Յուվենտուսի» ոչ-ոքին էր Թուրքիայի չեմպիոն «Գալաթասարայի» հետ:

Երրորդ խմբի երկու խաղերն էլ ավարտվեցին միեւնույն 2-0 հաշվով: Մեծ հետաքրքրությամբ էր սպասվում «Ռեալ»-«Ինտեր» հանդիպումը, որը Մադրիդի «Սանտյագո Բերնաբեու» մարզադաշտի որակազրկման պատճառով անցկացվեց Սեւիլյայում: Առաջին խաղակեսի վերջում կորիս խաղի համար դաշտից հեռացվեց «Ինտերի» պաշտպան Սալվատորե Ֆերեգին, եւ հանդիպման երկրորդ կեսն ընթացավ Չեմպիոնների լիգայի նախորդ խաղարկության հաղթող «Ռեալի» շոշափելի առավելությամբ: 79-րդ րոպեին Ֆերնանդո Հիերոն 11 մետրանոց տուգանային հարվածով առանցքային գոլ խփեց իտալացիների դարպասը, իսկ վերջին րոպեին Կլարենս Զեեոորֆը կրկնապատկեց հաշիվը: Ավելացնենք, որ «Ինտերի» կազմում բացակայում էին Ռոբերտո Բաջիո եւ Յուրի Ջորկաեֆը, իսկ Ռոնալդոն ոչ մի բանով աչքի չընկավ:

Կարեւոր հաղթանակ տարավ Մոսկվայի «Սպարտակը», որը Գրաց քաղաքի «Անոնդ Շվարցենեգեր» մարզադաշտում հանդիպեց «Շտուրմ» թիմի հետ: Շուրջ 60 րոպե խաղն ընթանում էր փոխնփոխ գրոհներով, երկու թիմերն էլ գոլ խփելու հնարավորություններ ունեցան, սակայն հաշիվը բացվեց միայն 62-րդ րոպեին: Սպարտակցիների ավագ Իլյա Ցիմբալարի կատարած տուգանային հարվածից հետո դաշտի տերերի դարպասապահ Կազիմեժ Սիդորչուկը ետ մղեց գնդակը, սակայն վրա հասած եգոր Տիտովն այն ուղղեց ցանցի մեջ: Ընդամենը 3 րոպե անց Ցիմբալարը գեղեցիկ հարվածով հաշիվը դարձրեց 2-0:

Չափազանց գրավիչ պայքարում անցավ չորրորդ խմբի «Մանչեսթր Յունայթեդ»-«Բարսելոն» հանդիպումը: Անգլիացի ֆուտբոլիստներն իրենց նշանավոր «Օլդ Տրաֆորդ» մարզադաշտում կայացած խաղը շաս հաջող սկսեցին եւ շուտով հաշիվը 2-0 էր՝ նրանց օգտին: Խաղավարտից 20 րոպե առաջ նրանք կրկին առաջատար էին՝ 3-2, սակայն իսպանացի ֆուտբոլիստների համառությունը պարգեւատրվեց. Լուիս Էնրիկեն կարողացավ հավասարեցնել հաշիվը՝ 3-3: Հանրահայտ «Բավարիան», որն այժմ էլ Գերմանիայի առաջնությունում միայն հաղթանակներ է տարել, այս անգամ «սայթաքեց»: «Բոնդբյուն» կարողացավ 2-1 հաշվով առավելության հասնել մյունխենցիների նկատմամբ:

Լանս քաղաքի համանուն ակումբի եւ Լոնդոնի «Արսենալի» հանդիպման 51-րդ րոպեին Մարկ Օվերմարսը գրավեց ֆրանսիացիների դարպասը: Հետագայում եւս խաղն ընթանում էր հյուրերի առավելությամբ: Սակայն դաշտի տերերը մրցավարի ավելացրած ժամանակի ընթացքում կարողացան հավասարեցնել հաշիվը: Գոլը խփեց Տոնի Վիրելը: Հինգերորդ խմբի մյուս խաղում «Պանաթինաիկոսն» իր դաշտում պարտության մատնեց Կիեւի «Դինամոյին»: Ընդդաշտում պարտության մատնեց Կիեւի «Դինամոյին»: Ընդդարում, խաղի հաշիվը բացեցին ուկրաինացի ֆուտբոլիստները:

Վեցերորդ խմբում «Կայզերսլաուտերնը» կարողացավ մի կերպ հաղթանակ կորզել Լիսաբոնի «Բենֆիկայի» հետ հավասար խաղում: Նախնական փուլում «Երեւանի» մրցավասար խաղում: Նախնական փուլում «Երեւանի» մրցավասար խաղում: Նախնական փուլում «Երեւանի» մրցակից ՀԻԿ-ը հյուրընկալվելիս արժանի դիմադրություն ցույց տվեց նշանավոր «Էյնդհովենին» եւ զիջեց միայն նվազագույն հաշվով:

ԱՌԱՋԻՆ ԽՈՒՄԲ

Պորտու (Պորտուգ.)-Օլիմպիակոս (Հունաստան)՝	2-2
Կրացիա (Խորվաթիա)-Այաքս (Հոլանդիա)՝	0-0

ԵՐԿՐՈՐԴ ԽՈՒՄԲ

Ասլեթիկ (Իսպանիա)-Ռուսենբորգ (Նորվեգիա)՝	1-1
Յուվենտուս (Իտալիա)-Գալաթասարայ (Թուրքիա)՝	2-2

ԵՐՐՈՐԴ ԽՈՒՄԲ

Ռեալ (Իսպանիա)-Ինտեր (Իտալիա)՝	2-0
Շտուրմ (Ավստրիա)-Սպարտակ (Ռուսաստան)՝	0-2

ՉՈՐՐՈՐԴ ԽՈՒՄԲ

Բոնդբյու (Դանիա)-Բավարիա (Գերմանիա)՝	2-1
Մանչեսթր Յունայթեդ (Անգլ.)-Բարսելոն (Իսպ.)՝	3-3

ՀԻՆԳԵՐՈՐԴ ԽՈՒՄԲ

Լանս (Ֆրանսիա)-Արսենալ (Անգլիա)՝	1-1
Պանաթինաիկոս (Հունաստ.)-Դինամո (Ուկրաինա)՝	2-1

ՎԵՑԵՐՈՐԴ ԽՈՒՄԲ

Էյնդհովեն (Հոլանդիա)-ՀԻԿ (Ֆինլանդիա)՝	2-1
Կայզերսլաուտերն (Գերման.)-Բենֆիկա (Պորտուգ.)	1-0

ԵՐԵՎԱՆ

Ուղղությունները նախանշված են

Վերջերս Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիային տարածք հանձնվեց Արայան փողոցի բարձրահարկերից մեկում: Կարճ ժամանակամիջոցում այն կարգի բերվեց, եւ այժմ հանրապետական ֆեդերացիան ունի բարեկեցիկ, կոկիկ մի «բնակարան», որը հայաստանյան ֆուտբոլը ղեկավարելու մի իսկական շտաբ է:

Ֆուտբոլի մարդկանց բնակարանումը շնորհավորելու էին եկել շատերը: Երեւանի քաղաքապետ, ՀՀ ֆուտբոլի ֆեդերացիայի նախագահ Սուրեն Աբրահամյանը, դիմելով ներկաներին, ասաց, որ այս շենքը, ստեղծված պայմանները պարտավորեցնող են. պետք է մարզածեւի ներկայացուցիչների աշխատանքը համապատասխան լինի, բոլորից ավելին է սպասվում հայկական ֆուտբոլի վաղեմի փառքը վերականգնելու համար: Իսկ պետական հոգացության, ֆինանսական ներդրումների, ինչպես նաեւ բոլորի ջանասեր աշխատանքի դեպքում նոր հաջողություններ կլինեն: Իհարկե, դրա համար ժամանակ է պահանջվում: Պրն Աբրահամյանն ի թիվս այլ հարցերի, չափազանց կարեւորեց մարզական ժամանակակից կառույցների հարցը: Նա ասաց, որ երկուշաբթի օրվանից սկսվել է Հանրապետական մարզադաշտի վերանորոգումը: Պետք է ամեն ինչ անել, որպեսզի այդ կարեւորագույն մարզօջախը մեկ տարվա ընթացքում անհրաժեշտ տեսք ունենա:

Նորամուտը շնորհավորեցին ՀՀ մշակույթի, երիտասարդության հարցերի ու սպորտի նախարար Ռոլանդ Շառոյանը, ՀԱՕԿ-ի նախագահ Ալեխան Ավետիսյանը, Հայաստանի շախմատի ֆեդերացիայի նախագահ, ՖԻՖԵ-ի փոխնախագահ, ակադեմիկոս Վանիկ Չախարյանը, բռնցքամարտի հանրապետական ֆեդերացիայի առաջին փոխնախագահ, ՕՀՀՈՒ-ի տնօրեն Դերենիկ Գաբրիելյանը, «Հրազդան» մարզահամալիրի տնօրեն Աշոտ Աղաբաբյանը, փոխտնօրեն, սպորտի վաստակավոր վարպետ Հարություն Քեհեյանը, մարզական մեկնաբան, «Ֆուտբոլ+» շաբաթաթերթի գլխավոր խմբագիր Սուրեն Բաղդասարյանը, ՈՒՀԱ-ի հանրապետական ֆեդերացիայի նախագահ Կարեն Դազարյանը... Վերջինս նշեց, որ Հանրապետական մարզադաշտը, իրոք, համաժողովրդական կառույց պետք է լինի: Նա ավելացրեց «Շարմի» անունից, որ առաջիկայում նկարահանվող տեսահոլովակի հոնորարն իրենք որոշել են փոխանցել մարզադաշտի վերակառուցմանը:

Ընդհանրապես ֆուտբոլի նկատմամբ համաժողովրդական, համապետական վերաբերմունքի անհրաժեշտությունը նշեցին շատերը:

Այդ օրը նաեւ մամուլի ասուլիս անցկացվեց ֆուտբոլի թեմայով գրող լրագրողների համար: Հանրապետական ֆեդերացիայի նախագահ Սուրեն Աբրահամյանը հանգամանալից կերպով խոսեց իրենց նախանշած աշխատանքների հիմնական ուղղությունների մասին: Պրն Աբրահամյանը չափազանց մեծ նշանակություն տվեց մանկապատանեական ֆուտբոլի զարգացմանը: Նա կարեւորեց ակումբային ֆուտբոլի, հավաքական թիմի հարցերը, խնդիրները: Մեծ նշանակություն տվեց մարզաբազաների վիճակին, ընդհանրապես՝ նյութատեխնիկական ապահովվածությանը: Նշեց նաեւ մասնագիտական կադրերի կարեւորությունը, ֆուտբոլիստների՝ պրոֆեսիոնալ վերաբերմունքի անհրաժեշտությունը: Չափազանց կարեւոր է նաեւ մարզական գիտության հետ սերտ համագործակցությունը: Հարցերը շատ են եւ բոլորն էլ՝ կարեւոր: Ընդհանրապես, այստեղ ոչ մի մանրուք չկա:

Այնուհետեւ ֆեդերացիայի նախագահ Սուրեն Աբրահամյանը, փոխնախագահ Աբրահամ Բաբայանը, ազգային հավաքականի գլխավոր մարզիչ Սուրեն Բարսեղյանը պատասխանեցին լրագրողներին հետաքրքրող հարցերին: Ասուլիսը չափազանց բովանդակալից էր եւ, հուսախություն լրագրողների, պրն Բաբայանն ասաց, որ նման հանդիպումներ առաջիկայում ավելի հաճախ կանցկացվեն:

ՀԱՄԱՌՈՏ

Պատվավոր կոչում բռնցքամարտիկին

Ամերիկացի հանրահայտ բռնցքամարտիկ, աշխարհի բազմակի չեմպիոն Մոհամեդ Ալին, թեեւ տառապում է Պարկինսոնի հիվանդությամբ, չի դադարեցնում իր ակտիվ հասարակական գործունեությունը: Հենց վերջերս նա Կուբայում էր, որտեղ 100 հազար դոլար հանձնեց հիվանդ երեխաների բուժման համար: Հաշվի առնելով Մոհամեդ Ալու գործունեությունը, ՄԱԿ-ը նրան «Խաղաղության դեսպան» պատվավոր կոչում է շնորհել: Նախկին բռնցքամարտիկին հավատագիրը ՄԱԿ-ի շտաբ բնակարանում հանձնել է այդ կազմակերպության նախագահ Կոֆի Անանը:

Աշխարհի գավաթի խաղարկությունը

Չյուդոյի միջազգային ֆեդերացիան որոշում է կայացրել Աշխարհի գավաթի թիմային մրցումները երկու տարին մեկ անցկացնելու վերաբերյալ: Առաջին այդպիսի մրցաշարն անցկացվեց Մինսկում: Բելառուսի մայրաքաղաքում ավարտված մրցումներում ահա թե ինչ հերթականությամբ տեղեր գրավեցին մրցանակակիրները. տղամարդիկ՝ 1. Ճապոնիա, 2. Բրազիլիա, 3-4. Ֆրանսիա եւ Ռուսաստան, կանայք՝ 1. Կուբա, 2. Ֆրանսիա, 3-4. Բելգիա եւ Չինաստան:

Մրցեցին վոլեյբոլիստուհիները

Հոնկոնգում անցկացվեց վոլեյբոլի «Գրան պրի» շարքի կանանց մրցաշար, որին մասնակցում էին աշխարհի ուժեղագույն հավաքականները: Առաջին տեղի համար խաղում հանդիպեցին Ռուսաստանի եւ Բրազիլիայի հավաքականները: Վերջինս, 3-0 հաշվով շահելով խաղը, նվաճեց մրցաշարի հաղթողի կոչումը: Ռուսաստանի վոլեյբոլիստուհիները գրավեցին 2-րդ տեղը: Հաջորդ տեղերը վիճարկեցին Կուբայի եւ Չինաստանի հավաքականները: Մրցանակային 3-րդ տեղը գրավեցին Կուբայի մարզուհիները, որոնք հաղթեցին 3-1 հաշվով:

Սամսոնովի նոր հաջողությունը

Համաշխարհային դասակարգման թիվ մեկ սեղանի թենիսիստ Վլադիմիր Սամսոնովը (Բելառուս) մեկ անգամ եւս հաստատեց իր բարձր կարգը՝ հաղթելով Գերմանիայի Ալեն քաղաքում անցկացված «Յուրոփեն մասթերզ կատ» հեղինակավոր մրցաշարում: Կիսաեզրափակիչում Սամսոնովը պարտության մատնեց փորձառու Յորգ Ռոսկոպֆին (Գերմանիա), իսկ վճռական խաղում՝ Աշխարհի գավաթի տիրոջը՝ Ժան-Միշել Սեյին (Բելգիա): Երկու դեպքում էլ Սամսոնովը հանդիպումները շահեց 3-0 հաշվով: Ալեն քաղաքում անցկացված մրցաշարը զիջում է միայն աշխարհի առաջնությանն ու օլիմպիական խաղերին, այն հաղթողին բերեց 70 հազար դոլար պարգեւավճար:

digitised by A.R.A.R.@

ԱԶԳ

Օրվա հետքով

ՀԱՅԱՁՐՈՒՅՑ

Բերեզովսկի. «Ելցինի ժամկետն ավարտվել է»

Բրիտանական BBC գործակալությունը դիմել է «Ռուսաստանի ամենաազդեցիկ եւ հզոր մարդուն» մագնատ Բորիս Բերեզովսկուն: Արեւմուտքցիների կարծիքով, նա այսօր Ռուսաստանում կատարում է գլխավոր դերը՝ տիկնիկվարի պարտականություններ: Ստորեւ ներկայացնում ենք հատվածներ Բերեզովսկու հարցազրույցից:

– Պրն Բերեզովսկի, Ռուսաստանը ճգնաժամից ճգնաժամ է գնում: Պրիմակովն ի՞նչ կարող է անել, որ չի կարող անել Կիրիենկոն:

– Կարծում եմ, Պրիմակովը կարող է կայունացնել այսօրվա բացարձակ վտանգավոր իրավիճակը: Ինչպես գիտեք, ամենատարբեր խաղախական կուսակցություններ համաձայնել են, որ Պրիմակովն այս փուլում ճիշտ ընտրություն է:

– Մենք երեքուղներ ունենք, որ Պրիմակովը պարզապես կսկսի փող տալ:

– Ես չեմ ուզում խորամուխ լինել Պրիմակովի տնտեսական ծրագրի մանրամասնություններին, մանավանդ որ նա առայժմ չի էլ հռչակել: Բայց արդեն կատարված նշանակումները (Մաքլյուկով, Գերաշչենկո) վկայում են, որ նա չի զգում, թե ինչ ուղղությամբ է հարկավոր առաջ շարժվել: Դա չի նշանակում, թե նա չի ուզում առաջ գնալ, նշանակում է, որ նա պարզապես չի զգում այդ ուղղությունը: Սա է խնդիրը:

– Հետաքրքիր իրավիճակ է ստեղծվում. Արեւմուտքը փող է տալիս Ռուսաստանին, իսկ ռուսաստանցի մագնատներն իրենց կապիտալները տանում են Արեւմուտք...

– Չգիտեմ, թե դուք ինչ տվյալներից եք օգտվում: Ինչ վերաբերում է կոնկրետ իմ ընկերություններին, մենք մեր փողերը դուրս չենք բերում: Ես արտասահմանում տներ չեմ գնում, ինչպես գրում են այդ մասին: Ես որոշ ժամանակով տներ եմ վարձակալել Ֆրանսիայում, Շվեյցարիայում:

– Ի՞նչ կասեք Լոնդոնում, Սանտ-Ռոսում գտնվող ամուսնի կայքի մասին:

– Ոչ, դրանք ինձ չեն պատկանում:

– Պրն Բերեզովսկի, ճախողան ելցինի ժամկետն ավարտվե՞լ է:

– Այո:

– Նա պետք է հեռանա՞:

– Կարծում եմ՝ այո: Իհարկե, դա պայմանավորված է նրանով, թե ինչպիսի՞ այլընտրանք կլինի, բայց կարծում եմ, որ այսօր ունենք նրանից ավելի լավ այլընտրանք:

– Այդ մասին խոսե՞լ եք նրա դստեր հետ:

– Ես նրա հետ վերջին տարիներին քննարկել եմ ծագած դժվարությունները: Ընդհանուր առմամբ նա համաձայն է, որ մեր բազմաթիվ խնդիրները բխում են նախագահի թուլությունից:

– Նա հասկանա՞լի է, որ իր հարցը պետք է հեռանա:

– Նա ծանր իրավիճակում է. այո, նա նախագահի թե՛ դուստրն է եւ թե՛ օգինականը եւ հասկանում է, որ պետք է մտածի ոչ միայն հոր, այլեւ պետության մասին: Ինչպես ես եմ հասկանում, նա ընդունակ է զանազանելու ելցին-հորը ելցին-նախագահից:

– Ռոքսի ելցինի իրավախորհրդի պատասխանո՞ւմ եք գեներալ Լեբեդին:

– Ես չեմ պատասխանում գեներալ Լեբեդին, ես պատասխանում եմ այն մարդկանց, ովքեր փորձում են շարունակել բարեփոխումները:

– Դուք միջոցներ հատկացրե՞լ եք Լեբեդի ընտրարշավին, ինչպես ելցինին:

– Կրասնոյարսկում նախընտրական արշավին ես միջոցներ չեմ հատկացրել, բայց իմ պատասխանությունն եմ հայտնել Լեբեդին:

– Ասացեք, ի՞նչ եք մտածում ձեր երկրում ստեղծված իրավիճակի մասին: Երբ ձեզ նման ազդեցիկ գործարարներ փաստորեն կարողանում են խախտության հասցնել մարդկանց եւ հեռացնել նրանց: Դա ժողովրդավարությո՞ւն է:

– Նախ եւ առաջ ծիծաղելի է արդեն այն, ինչ դուք հիմա կրկնում եք ուրիշներին հետեւելով: Ես ոչ մի ռուբլի չեմ ներդրել ելցինի ընտրարշավում: Բայց ես իմ ամբողջ եռանդը գործի եմ դրել 1996 թ. նրան աջակցելու համար:

– Դո՞ւք որոշեցիք, որ վարչապետ կդարձնեն պետք է հեռանա: Դա Ձե՞ր վճիռն է:

– Դա իմ ընթրումն էր եւ ես բացահայտորեն արտահայտում էի:

– Բայց դուք ձեր ազդեցությունն օգտագործեցի՞ նրա պատասխանատվության հասնելու համար:

– Ես միայն արտահայտում էի իրավիճակի իմ ընթրումը: Նույն ձեւով ես իմ ընթրումն էի արտահայտում Չեռնոմիրդինի առնչությամբ, երբ նա հրաժարական տվեց: Ես նաեւ ասացի, որ, իմ կարծիքով, նա պետք է թողնի վարչապետի պատասխանը, քանի որ այլեւս անհրաժեշտ չունի: Դրանից բացի ես ոչինչ չեմ անում: Չեմ գնում ելցինի մոտ եւ նրան ասում, թե նա պետք է պատասխանատու անի Չեռնոմիրդինին: Ես լոկ բացահայտ արտահայտում եմ իմ դիրքորոշումը:

– Ի՞նչ եք մտածում «Տորպեդո» հանդեսի հրապարակման մասին, որտեղ պնդվում է, թե դուք առատաձեռն մատակարարում եք:

– Ես իմ վերաբերմունքն արտահայտեցի՝ դատական հայց ներկայացնելով Լոնդոնում եւ կշարունակեմ այդ դատական գործը:

– Բայց չէ՞ որ Լոնդոնի դատարանը հրաժարվեց ընթացք տալ ձեր այդ գործին:

– Բնավ՝ ոչ, ես գանգատարկել եմ, եւ աշնանն այդ գործը կշարունակվի:

– Ի՞նչ հեռանկարներ ունեք: Ուզո՞ւմ եք դառնալ ավելի հարուստ, ազդեցիկ:

– Ոչ, այս պայմաններում չեմ ուզում լինել ոչ ավելի հարուստ, ոչ էլ ավելի ազդեցիկ: Ես ուզում եմ հասնել ներքին հավասարակշռության եւ լինել ինչպես ինձ նման:

«ԿՈՄՍՈՄՈԼՍԿԱՅԱ ՊՐԱՎԴԱ»

ԲՈՒԼՎԻՆՈՍ ՔԵՄԻՔԼԶ ՍՊԸ
ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀՐԱՎԵՐ

Անգլիական BCL ընկերությունն աշխատանքի է հրավիրում բարձրագույն կրթություն ունեցող անձանց հետեւյալ պաշտոնների համար.

– ՄԱՐԿԵՏԻՆԳ ԵՎ ԻՐԱՑՈՒՄ
Պայմաններ՝
- Համալսարանավարտ բիզնեսի, տնտեսագիտության կամ մարկետինգի մասնագիտությամբ
- Քաջատեղյակ համակարգչային աշխատանքին
- Անգլերեն լեզվի տիրապետումն առավելություն է
- Մի քանի տարվա աշխատանքային փորձն անհրաժեշտ է

– ԳՈՎԱԶԴԱՅԻՆ ԳՈՐԾԱԿԱԼ
Պայմաններ՝
- Բարձրագույն կրթություն
- Համակարգչային աշխատանքին ծանոթ
- Անգլերեն լեզվի տիրապետումն առավելություն է
- Մի քանի տարվա աշխատանքային փորձ

Բոլոր դիմողներն իրենց մասնագիտական տվյալները (resume) պետք է ներկայացնեն՝ կցելով մեկ լուսանկար, հետեւյալ հասցեով՝

Թեհրյան կենտրոն, Ա մասնաճյուղ, 1-ին հարկ, ժամը 10-17-ը, մինչեւ սեպտեմբերի 25-ը: Հեռախոս՝ 57-78-45

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Սեպտեմբերի 22-ին, ժամը 15-ին, գրողների միության մեծ դահլիճում տեղի կունենա գրական հանդիսություն՝ նվիրված գրող Շահան Շահնուրի ծննդյան 95-ամյակին: ՀԳՄ

ՓՆՏՐՎՈՒՄ Է ՎԱՐՁՈՎ
1 սենյականոց բնակարան
15-16 թաղամասերում
կամ Ավանում:
Հեռ.՝ 45-44-56 Արսենին

ՎԱՃԱՌՎՈՒՄ Է
առանձնատուն, 80 քառ. մ. նկուղ-ավտոտնակով եւ երկու բնակելի հարկով (առանց ներքին հարդարանքի), «Զվարթնոց» կինոթատրոնի մոտակայքում (Մոնումենտ): Կա նաեւ մրգատու ծառերով փոքրիկ այգի: Զանգահարել 27-22-57 *ժամը՝ 10-16*, 58-33-26 *ժամը՝ 18-23*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ՍԿԱՈՒՏԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԱՐԱԳԱԾՈՏԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԸ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ ԵՆ
ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԱՐՇԱՎ
ԴԵՊԻ ԱՐԱԳԱԾԻ ԳԱԳԱԹ
ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 20-21-Ը՝
ՆՎԻՐՎԱԾ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ 7-ՐԴ ՏԱՐԵԴԱՐՁԻՆ:
ԱՐՇԱՎԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼ ՑԱՆԿԱՑՈՂ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԸ ԼՐԱՑՈՒՑԻՉ ՊԱՅՄԱՆՆԵՐԻՆ ՀԱՄԱՁԱՅՆ ՊԱՏՇԱՌԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԿԱՐՈՂ ԵՆ ՁԱՆԳԱՀԱՐԵԼ ՄԻՆՉԵՎ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 19-Ը ՀԱՍԿ ԳՐԱՍԵՆՅԱԿ:
ՀԵՌ. 551875

ՎԱՃԱՌՎՈՒՄ Է
արտասահմանյան արտադրության օֆսեթ թուղթ,
խտությունը՝ 70 գ/մմ², գինը՝ 1 կգ - 750 դրամ:
5 տ-ից ավելի գնելու դեպքում՝ 650 դրամ, այդ թվում ԱԱՀ-ը:
Վաճառվող թուղթը կարող է կտրատվել գնորդի կողմից պահանջվող չափերով:
Դիմեցեք՝ «Տիգրան Մեծ» հրատարակչություն ՓԲԸ, Արշակունյաց-2
Հեռ. 52-70-56, 52-73-69, 52-06-46, 52-70-49
ՏԼՕՐԵՆՈՒԹՅՈՒՆ

ՆՈՐ ԲԱՑՎՈՂ ԻՏԱԼԱԿԱՆ ՌԵՍՏՈՐԱՆԸ
ՀՐԱՎԻՐՈՒՄ Է ԱՇԽԱՏԱՆՔԻ
մինչեւ 30 տարեկան աղջիկների եւ տղաների որոնես
խոհարարի օգնական,
բարմեն,
մատուցող:
Ցանկացողները կարող են մինչեւ սեպտեմբերի 25-ը, ամեն օր, բացի շաբաթ եւ կիրակի օրերից, ժամը 16-18-ը դիմել Տիգրան Մեծի 4, 2-րդ հարկ, 12-րդ սենյակ, Իտալթրեյդ գրասենյակ:
Ներկայացնել ինքնակենսագրություն:
Հեռ. 58-93-37, 56-23-18:

ԱԶԳ ՕՐԱԹԵՐԹ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՎԵՔ

Օրաթերթը զեղչ գներով կարող եք բաժանորդագրվել Հայմամուլի գրասենյակներում կամ Հայփոստի բաժանմունքներում:

ԶԵՂՉ ԳՆԵՐՈՎ

Վեցամսյա բաժանորդագրություն՝
~~12600~~ 9000 դր.

Եռամսյա բաժանորդագրություն՝
~~6300~~ 5000 դր.

Ամսական բաժանորդագրություն՝
~~2100~~ 2000 դր.

ՀԵՌՈՒՏԱԾՐԱԳՐԵՐ

18 սեպտեմբեր

ՇՏ
17.20 3-րդ ալիք
18.00 Հեռուստաթերթ «Դալլաս»
19.00 Մայրամաղամ
20.00 Լուրեր
20.40 Հեռուստակատաղոգ
20.45 Հավատամք
21.00 3-րդ ալիք
22.30 Գ/Ֆ «Անն Կարենինա»
24.00 Լուրեր
00.15 3-րդ ալիք

ՆՈՐՔ
19.05 Մուլտֆիլմ
19.15 Միասին («Միր»)
20.00 Լուրեր
20.30 Լուս-ա-մութ
20.35 Ներշնչանք (գեղանկարիչ Լեւոն Ս-խայան)
20.55 Սերիալ «Սիալեթ» (5-րդ մաս)
21.30 Եղանակի տեսություն
21.35 Աստղերը հուշում են
21.40 ԱՐՏ-13. Հիթ օրերը
22.00 ԱՐՏ-13. Ծանոթ-անծանոթը
22.30 «02» լրատու
23.00 Կինոկատակերգություն. գեղֆիլմ «Սիրուհիները»
23.55 Սիրեցեք զմիմեանս
00.00 Լուրեր
00.15 «Սիրուհիները» ֆիլմի շարունակությունը
00.45 «Օրացույց» («Երեւան» ստուդիա)

ՌՏ
19.05 Մամուլի ստրիանդակ
19.15 Մի անգամ
19.20 Գ/Ֆ «Բանականություն եւ զգայականություն» մելոդրամա
(20.55 Ստրիանդակ)
22.00 Մամուլի ստրիանդակ
22.10 Հեռագրություն
22.55 Ստրիանդակ
23.15 «Հավատա ինձ դեզ» տեսաֆիլմը
00.00 Արքուր էլբակյանի հեղինակային «Ուրաթ գիտեր՝ բոլորովին ֆուն չունեմ» ծրագիրը. Հանդիպում. «Երեւանի դրամատիկական թատրոն-30-ամյակ»: Գեղֆիլմ: Էրոտիկ ֆիլմ:
(00.55, 02.55 Ստրիանդակ)

ԳՏ
7.00 Բարի լույս
10.00, 16.00, 19.00, 01.20 Նորություններ
10.15 «Սուլթանի գեղեցիկ Ռոխսոլանան»
11.30-16.00 Բիզնես TV
16.20 Ֆիլմ «Սարսափելի ինչ-որ բան է գալիս»
17.55 Սեզամ փողոց
18.25 Ֆուտիս ձեղնահարկ
19.20 «Սուլթանի գեղեցիկ Ռոխսոլանան»
20.10 Առողջություն
20.45 «Հոսքերի դաշտ»
21.45 Բարի գիշեր, երեխաներ
22.00 Ժամանակ
22.40 Դետեկտիվ «Երեք գործողությամբ սպանություն»
00.35 Հայացք
01.35 Գ/Ֆ «Գաղտնագրված անունը՝ Ջինվոր»

ՊՐՏ
8.00 Բարի լույս, Ռուսաստան
11.00 «Սանտա Բարբարա»
11.45 Առողջության աշխարհ
11.50 Ի գիտություն
12.00, 15.00, 18.00, 21.00, 01.00 Լուրեր
12.30 Կինոնկար երեխաների համար «Կորել է ընկերը»
13.35 Հին բնակարան. 1966 թ. (1-ին մաս)
14.45 Աստղերի տուն «Լե մոնտի»
15.35 Գ/Ֆ «Անավարտ պատմություն»
17.15 «Զանգահարեք Կուզյային»
17.30 Սերիալ «Առաջին համբույրները»
18.30 Աշխարհ
19.00 Բոլորի շուրթերին
19.30 Հեռուստաթերթ «Մայրեր, կանայք եւ սիրուհիներ»
20.30 «Մարինա ռոշչա»
21.30 Մանրամասներ
21.45 «Քաղաքիկ»
22.20 Դիմակներ-շոու
23.20 Երաժշտական ռինգ. «Եվրոպա պլյուս» ռադիոն ընդդեմ «Սուզ TV» հեռուստալիքի
01.30 Վերջին կինոսեանս. Գ/Ֆ «Ելենան արկղի մեջ» (ԱՄՆ)

«ՍՓՅՈՒՌ» ՏԵՂԵԿԱՏՈՒ - ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՁԵՌՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ
հեռախոսով (589167, 581351) * տեղեկագրքերով * մագնիսական սկավառակներով * INTERNET ցանցով (http://www.arminco.com/spyur)

«Տիգրան Մեծ» հրատարակչության տպարան, Երեւան-23, Արշակունյաց 2 Գրանցման թիվ 65. Պատվեր 69149. Պատճեն 907 Տպաքանակը՝ 4000 Ստորագրված է տպագրության՝ 17. 09. 1998 Գինը՝ 100 դրամ

digitised by A.R.A.R.@